«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎԿ

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Երևան – 2014

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի «Հայբուսակ» համալսարանի (այսուհետ՝ ԵՀՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության Կրթական ծրագրերի իրականացման գրասենյակի աջակցությամբ: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ը առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 արտասահմանցի փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագիտական խմբի առջև դրված էր երկու խնդիր՝

1) հավատարմագրման նպատակով իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Սույն զեկույցը ներառում է ըստ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշերի ու չափորոշիչների իրականացված ԵՀՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննության զեկույցը, ինչպես նաև գործընկերային գնահատումը՝ ըստ Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3
ԱՄՓՈՓՈՒՄ 4
ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ 8
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 11
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 16
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 16
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 18
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 22
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 25
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 29
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 33
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 36
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 39
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 41
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 43
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ 46
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 47
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 50
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 52
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 54
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԲՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 55

ԱՄՓՈՓՈՒՄ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Երևանի «Հայբուսակ» համալսարանը հիմնադրվել է 1990թ.՝ դառնալով անկախ Հայաստանի առաջին մասնավոր բուհերից մեկը: Որպես կրթական, գիտամշակութային հաստատություն բուհն իր հիմնական առաքելությունն է սահմանել գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը՝ ՀՀ ՈԱՇ-ով սահմանված բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանների շրջանակում իրականացնելով ուսուցում 15 կրթական ծրագրերով, որոնցից հատկապես կարևորում է բժշկագիտությունը, տնտեսագիտությունը, դիզայնը, մանկավարժությունը, իրավագիտությունը:

Իր գործունեության ընթացքում համալսարանը եվրոպական չափանիշների, չափորոշիչների և ուղենիշների հաշվառմամբ պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում չի անցել. սույն գործընթացը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համալսարանի առաջին փորձն է:

ԵՀՀ-ը 2009թ. ստեղծել է Որակի ապահովման կենտրոն, 2010 - ին՝ Շրջանավարտների աշխատանքի տեղավորման և կարիերայի կենտրոն, 2011 – ին՝ Միջազգային կապերի վարչություն: Վերոնշյալ կառուցվածքային համալրումները նպաստել են հաստատության ինստիտուցիոնալ զարգացմանը, կրթության որակի ապահովման մի շարք մեխանիզմների ներդրմանը և որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի ինքնագնահատման որոշակի փորձի ձեռքբերմանը:

ԵՀՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքները հիմնականում համադրելի են «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակում» բակալավրի և մագիստրոսի մասնագիտական հմտություններին ու կարողություններին ներկայացվող պահանջներին: Որպես իր գործունեության ընդհանրական նպատակ և արդյունք համալսարանը հետապնդում է «գիտելիք – կարողություն - հմտություն» միասնական կապի ապահովումը՝ նպատակամիտված աշխատաշուկայում մրցունակ մասնագետների ձևավորմանը:

Համալսարանում իրականացվող հետազոտությունների արդյունքները մեծ մասամբ էական կիրառական նշանակություն չունեն, սակավարդյունավետ են գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների ներգրավման գործող մեխանիզմները: Բուհի ամբիոնների մեծ մասում թույլ է դասավանդման և հետազոտության միջև կապը: Հիմնականում ուսանողների վարձավճարներից ձևավորվող ֆինանսական ռեսուրսները մեծ մասամբ ծախսվում են ընթացիկ ծախսերի կատարման համար և չեն ծառայում գիտահետազոտական գործունեության խրախուսման, դասավանդողների երիտասարդ սերնդի մասնագիտական աճի կամ դասավանդողների շարունակական որակական կատարելագործման ռազմավարական խնդիրների լուծմանը: Անբավարար միջոցներ են

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

հատկացվում նաև միջազգային համագործակցության համար, ինչը վտանգում է ոլորտի կայունությունը, ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությունը:

Վերջին տարիներին ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում տեղ գտած զարգացումների պայմաններում համալսարանում ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության ձևավորված մեխանիզմները չեն ապահովել դիմորդների կայուն հոսք, հատկապես՝ բակալավրիատի առկա ուսուցման համակարգում: ԵՀՀ-ը բակալավրիատի ուսանողների թվաքանակի կրճատումը փորձել է փոխհատուցել հեռակա ուսուցման ընդլայնմամբ: Համալսարանը դեռևս համակողմանիորեն չի գնահատել կրթական, խորհրդատվական, վարչական և այլ ծառայությունների որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը. գլխավոր պատճառը՝ ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմների անկատարությունն է:

Համալսարանի ենթակառուցվածքներն ու մարդկային ռեսուրսները հիմնականում բավարար են առաքելության ու ռազմավարական խնդիրների լուծման համար: ԵՀՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմում գերակշռում են բազմափորձ ու հմուտ դասավանդողները, ովքեր իրենց մասնագիտական ներուժով համապատասխանում են կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը: 2012-2013 ուստարում համալսարանում դասավանդել է 154 դասախոս, որոնցից 78-ը (ավելի քան 50 տոկոսը) հիմնական աշխատողներ են, իսկ 93 - ն (60 տոկոսը) ունեն գիտական աստիճան: Սակայն ուսանողների թվաքանակի անկման պայմաններում համալսարանում կրճատվում է նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմը: Ցածր աշխատավարձը և մասնագիտական առաջընթացի ոչ բավարար խթանները բարդացնում են երիտասարդ և որակյալ մասնագետների ներգրավման խնդիրը, և այս գործոնը կարող է կրթության որակի հետագա բարելավման լուրջ ռիսկեր ծնել:

Պրոֆեսորադասախոսական կազմի զգալի մասը ներգրավված է գիտահետազոտական աշխատանքներում, սակայն սահմանափակ են հնարավորությունները՝ հրատարակվելու օտարերկրյա գրախոսվող պարբերականներում, մասնակցելու արտասահմանում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին: Միջազգային փորձառություն ունի դասախոսական կազմի աննշան մասը: Համալսարանն իր առջև խնդիր է դնում բարձրացնելու, հատկապես փորձառու պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում, համակարգչային ծրագրերի և օտար լեզուների տիրապետման մակարդակը, ինչը միջազգայնացման և որակական առաջընթացի ապահովման կարևոր գրավական է::

Համալսարանն իր գործունեության թափանցիկությունը և հասանելիությունը ապահովելու նպատակով փորձում է կիրառել մի շարք մեխանիզմներ, այդ թվում՝ սեփական կայքէջի հնարավորությունները, սակայն դեռևս չունի արտաքին շահակիցների կարիքների վերհանման բավարար հիմքեր և գործիքներ, հասարակությանը հաշվետու լինելու պաշտոնապես հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր: Սա հանգեցրել է հետադարձ կապի ոչ բավականաչափ արդյունավետ պրակտիկայի ձևավորման:

Համալսարանը ձգտում է կանոնակարգել ու խթանել արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման գործընթացները՝ պլանավորելով գործընկերային համագործակցության որոշակի ծրագրեր, սակայն նախատեսված քայլերը հիմնականում կրում են հայեցակարգային բնույթ, ամրագրված չեն համապատասխան աշխատանքային

նախագծերով, իսկ նյութական և ֆինանսական ռեսուրսները դեռևս անբավարար են ուսումնառողների և դասավանդողների միջազգային շարժունության պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Համալսարանում կարևորվում է կրթության որակը և որակի ապահովումը, ինչն առայժմ բխում է ոչ այնքան բուհի կառավարման համակարգի կատարելագործման ներքին անհրաժեշտությունից, որքան՝ արտաքին պահանջներից: Բուհը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ որակի ապահովման գործընթացների կազմակերպման ու կայացման համար՝ թեև այդ գործընթացները հստակ կանոնակարգված ու պլանավորված չեն: Որակի ապահովման ներքին համակարգը դեռևս կայացման փուլում է. ձևավորվել են որակի ապահովման համապատասխան կառույցներ, մշակվել՝ որոշ ընթացակարգեր, սակայն անբավարար է ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը համակարգում, իսկ հիմնական մեխանիզմները դեռևս պետք է ձևավորվեն:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Համալսարանում գործում է կառավարման կանոնակարգված համակարգ, առկա են ՄԿԾ-ների իրականացման խնդիրների լուծմանը ծառայող ֆունկցիոնալ ստորաբաժանումներ:
2. Կրթական ծրագրերի բաղադրիչները՝ ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը համապատասխանում են ՀՀ Պետական կրթական չափորոշիչներին: Ներդրվել են կրեդիտների կուտակման և փոխանցման, ինչպես նաև գնահատման նոր՝ բազմագործոնային համակարգեր:
3. Համալսարանում առկա է իր առաքելությանը և կրթական ծրագրերին համապատասխան պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմ՝ կադրային, մասնագիտական որակներին ներկայացվող որոշակի պահանջների առաջադրմամբ:
4. Համալսարանն ապահովված է սեփական ուսումնական շենքերով ու կրթական միջավայրի ձևավորմանը նպաստող ենթակառուցվածքներով, այդ թվում՝ բազային պոլիկլինիկայով և ուսումնական բազաներով:
5. Համալսարանն ունեցել է և կարող է շարունակել ավանդական և այլընտրանքային բժշկության գծով մասնագետների պատրաստումը՝ որպես մրցակցային առավելություն:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Համալսարանի առաքելության, Ռազմավարական ծրագրերի, ՄԿԾ-երի մշակման գործընթացներում շահակիցների, հատկապես՝ արտաքին, անբավարար ներգրավվածությունը,
2. ֆինանսների տնօրինման քաղաքականության և ընթացակարգերի, ինչպես նաև մշտադիտարկման մեխանիզմների բացակայությունը,
3. շահակիցների շրջանում անցկացվող հարցումների արդյունքների վերլուծության և ամփոփման մեխանիզմների անկատարությունը,
4. հետազոտական աշխատանքներում ուսանողների ոչ բավարար ներգրավ-վածությունը, հետազոտական գործունեության և ուսումնառության թույլ կապը,
5. պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների զարգացման սահմանափակ հնարավորությունները,

6. հետազոտական գործունեության, մասնագիտական առաջընթացի, արտաքին կապերի զարգացման համար ֆինանսական միջոցների անբավարարությունը, միջազգային գիտահետազոտական նախագծերում համալսարանի չընդգրկվելը,
7. համալսարանի հասարակական պատասխանատվության ու հաշվետվողականության ապահովման մեխանիզմների բացակայությունը,
8. որակի ապահովման գործընթացներում բուհի ստորաբաժանումների և արտաքին շահակիցների ներգրավվածության ցածր աստիճանը:

Հիմնական խորհրդատվություն

1) Հստակեցնել բուհի առաքելությունը, ռազմավարական նպատակներն ու խնդիրները՝ փոխկապակցելով ֆինանսական պլանի հետ:
2) Կատարել համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների համակարգված վերլուծություն և հստակեցնել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների նպատակները և իրականացման մեխանիզմները: Մշակել գործողությունների պլան՝ օգտագործելով կատարողականի ցուցիչները:
3) Հստակեցնել առանձին ՄԿԾ-ների վերջնարդյունքները բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում, ինչպես նաև՝ դրանց գնահատման ընթացակարգերն ու մեխանիզմները:
4) Մշակել և ներդնել ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու մեխանիզմներ:
5) Մշակել համալսարանի, ֆակուլտետների, կրթական ծրագրերի մակարդակներում պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների բարելավման պլաններ:
6) Հստակեցնել հետազոտական ոլորտում համալսարանի հետաքրքրություններն ու հավակնությունները և մշակել բուհում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:
7) Ուսումնական սենյակները, կաբինետները, լաբորատորիաները հագեցնել ուսումնական միջավայրի համար անհրաժեշտ տեխնիկական, հաշվողական, հեռահաղորդակցության արդիական միջոցներով:
8) Մշակել պետության և հասարակության առջև հաշվետվողականություն ապահովող քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ:
9) Մշակել արտաքին կապերի և միջազգայնացման հստակ և իրատեսական ռազմավարություն:
10) Համալսարանի բոլոր ստորաբաժանումներում և գործառույթներում ներդնել որակի ներքին ապահովման մեխանիզմներ:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ

Համալսարանի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածք (ԵԲԿՏ) ինտեգրվելու հավակնության վերաբերյալ ներկայացվում են հետևյալ դիտարկումներն ու խորհրդատվությունը:

Դիտարկումներ

- Որակի ապահովման շրջանակը (առաքելություն, տեսլական, ռազմավարական նպատակներ և խնդիրներ, առանցքային արժեքներ, գործողությունների պլաններ, կատարողականի ցուցիչներ և այլն) բավականին թույլ է մշակված: Բուհի ֆինանսական պլանը և ռազմավարական ծրագիրը փոխկապակցված չեն: Պլանավորումը պետք է լինի առավել լավ փաստթղթավորված և իրատեսական:
- Համալսարանի կազմակերպական կառուցվածքը ընդգծված հիերարխիկ է: Շահակիցները բավարար չափով ներգրավված չեն որոշումների ընդունման գործընթացում:
- Որակավորումների ազգային շրջանակի և Բոլոնյան գործընթացի ազդեցությունն առավել տեսանելի է դասընթացների, քան ՄԿԾ-երի մակարդակով:
- Հավաքագրվում են բազմաթիվ տվյալներ, սակայն պարզ չեն վերջիններիս իրական նպատակները, ինչպես նաև դրանց արդյունքներից բխող հաջորդիվ քայլերը:
- Մասնագիտության կրթական ծրագրերը դեռևս խիստ փոխկապակցված են պետության կողմից սահմանված կրթական չափորոշիչներին, վերջնարդյունքների ձևավորման վրա առավել նվազ ազդեցություն ունեն որակավորումների ազգային (եվրոպական) շրջանակը, աշխատաշուկայի և ուսանողների կարիքները, համալսարանի պրոֆիլը, ինչպես նաև այլ համալսարանների բենչմարքինգը:
- Դասավանդման և ուսումնառության մեթոդներն աստիճանաբար համահունչ են դառնում ոչ միայն գիտելիքների, այլև՝ կարողությունների ձևավորման առումով:
- Ուսումնական պլանները կապակցված են, սակայն իրական միջազգայնացում ապահովելու համար բավականաչափ ճկուն չեն:
- Ուսումնական պլանների մշտադիտարկման և պարբերական վերանայման իրական ընթացակարգեր դեռևս մշակված չեն:
- Ուսանողները բարձրացնում են և բավարար չափով ներգրավված իրենց ուսումնառության գործընթացում: Օտար լեզուների և ՏՀՏ իմացության մակարդակը բարելավման կարիք ունի:
- Ուսանողների թվաքանակը (մասնավորապես մագիստրոսական ծրագրերում) շատ քիչ է, անցողիկ միավորները՝ բավական բարձր:
- Առկա են օտարերկյա ուսանողներ, սակայն դա այն չէ, ինչ մենք կոչում ենք միջազգայնացում:
- Հարկավոր է ավելի մեծ ուշադրություն դարձնել ուսանողների ուղղորդման, օժանդակման և խորհրդատվական ծառայություններին:
- Կարիերայի կենտրոնի առկայությունը դրական է, սակայն նրա գործունեությունը բարելավման կարիք ունի ինչպես գլխամասում, այնպես էլ մասնաճյուղում:

- Առկա չէ եվրոպական համալսարաններին հատուկ չեզոք անձերի (օմբուդսմեն) ինստիտուտը, որը կոչված է պաշտպանելու ուսանողների իրավունքները:
- Ուսանողներին մատուցվող ծառայություններն ունեն բարելավման կարիք: Չեն ստեղծված համապատասխան պայմաններ հատուկ կարքիներ ունեցող ուսանողների համար:
- Համալսարանի տարածքում առկա է նաև ավազ դպրոց, որն այդքան էլ նպատակահարմար չէ համալսարանական մշակույթի ձևավորման տեսանկյունից:
- Համալսարանի անձնակազմն օժտված է բարձր պրոֆեսիոնալիզմով, ներգրավված է և նվիրված իր աշխատանքին:
- Մարդկային ռեսուրսների կառավարումը բացակայում է: Չեն իրականացվում անձնակազմի գնահատում, կատարողականի վերլուծություններ, առկա չէ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների բարելավման պլան:
- Հետազոտական և նորարական գործընթացները թերմշակված են, և առկա չէ բարելավմանը միտված պլանավորում:
- Ենթակառուցվածքները գտնվում են պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակում, կատարվում են վերանորոգման աշխատանքներ, սակայն լաբորատորիաները չունեն բավականաչափ ժամանակակից սարքավորումներ և համակարգիչներ:
- Առկա է նոր տեխնոլոգիաների, էլեկտրոնային գրադարանի և ուսումնական նյութերի ներդրման անհրաժեշտություն:
- Հանրությանը մատուցվող ծառայությունները բացակայում են:
- Որակի ապահովման կենտրոնը չի համակարգում որակի ապահովմանը միտված գործունեությունը ողջ համալսարանում:

Խորհրդատվություն

1) Անհրաժեշտ է բուհի աշխատակիցների բոլոր կատեգորիաներին ակտիվորեն ներգրավել համալսարանի առաքելության, տեսլականի, առանցքային արժեքների սահմանման և վերանայման գործընթացներում: Համալսարանի առաքելությունը, տեսլականը, առանցքային արժեքները պետք է պարբերաբար գնահատվեն և ճշգրտվեն արտաքին շահակիցների կողմից:
2) Տեսլականը և առաքելությունը պետք է պարբերաբար վերանայվեն՝ ֆինանսական իրավիճակին համապատասխան:
3) Ուսումնառողները պետք է ավելի շատ ներգրավվեն որոշումների ընդունման գործընթացում:
4) Շատ կարևոր է ունենալ խորհրդատվական մարմին տարբեր մակարդակներում՝ գործատուների, աշխատաշուկայի ներկայացուցիչների, շրջանավարտների մասնակցությամբ:
5) Անհրաժեշտ է ներդնել որակի բարելավման համակարգը բուհի գործունեության կառավարման մակարդակում:
6) Մասնագիտության կրթական ծրագրերը վերանայելիս սկսել վերջնարդյունքներից՝ուշադրություն դարձնելով այն հարցին, որ ընդհանուր կարողությունները նույնպես գնահատվեն:
7) Առավել շատ տեղեկատվություն տրամադրել բուհի ուսումնառողներին և անձնակազմին Բոլոնիայի գործընթացի մասին:
8) Վերապատրաստել բուհի անձնակազմին՝ ուսանողակենտրոն ուսուցման և վերջնարդյունքներին միտված դասավանդման ու գնահատման թեմաներով:

9) Առավել մեծ ուշադրություն հատկացնել ավարտական հետազոտական աշխատանքներին:
10) Իրականացնել միջազգայանցմանն ուղղված գործընթացներ: Առավել ճկուն դարձնել ուսումնական պլանները: Վերլուծել ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ ծանրաբեռնվածության և կրեդիտների քանակի իրական փոխկապվածության պատկերը ստանալու համար:
11) Առավել մեծ ուշադրություն դարձնել անցողիկ բալերին և ուսումնառության միջին տևողությանը:
12) Ուշադրություն դարձնել դասավանդման մեթոդաբանությանը (մասնավորապես՝ լրացուցիչ պարապմունքների կազմակերպմանը):
13) Առավել մեծ ուշադրություն դարձնել որակի ապահովմանը միտված գործողությունների համակարգվածությանը բուհի գլխամասում և մասնաճյուղում (մշակել որակի ներքին ապահովման ձեռնարկ):

10 հուլիսի 2014թ.

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

Համակարգողի ստորագրություն

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՀՊՏՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

Իրինա Վանյան, ՃՇԱՀ, դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, Հայաստանի Հանրապետություն, փորձագիտական խմբի ղեկավար,

Անդրե Կովարտ՝ միջուկային ֆիզիկայի դոկտոր, Սան Լյուվենի համալսարանի պրոֆեսոր, Բելգիայի Թագավորություն, փորձագիտական խմբի անդամ,

Կոնստանտին Ենկոյան՝ ԵՊԲՀ, կենսաքիմիայի անբիոնի պրոֆեսոր, կենս. գիտ. դոկտոր, Հայաստանի Հանրապետություն, փորձագիտական խմբի անդամ,

Նարինե Հեքեքյան՝ ԵՊԼՀ հայագիտության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկնածու, Հայաստանի Հանրապետություն, փորձագիտական խմբի անդամ,

Արմինե Յարալովա՝ ՀՊՏՀ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի, Հայաստանի Հանրապետություն, փորձագիտական խմբի անդամ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի աշխատակից Հարություն Մարզպանյանը:
Թարգմանությունը կատարել է Նիերի-Գրեյս Բարդակջյանը:
Արձանագրությունները կազմել է Լիլիթ Պիպոյանը:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Երևանի «Հայբուսակ» համալսարանը դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշումն ընդունելուց հետո ՈԱԱԿ-ի, Կրթական ծրագրերի կենտրոնի և բուհի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով ըստ ՈԱԱԿ-ի սահմանած ձևաչափի, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Համալսարանի ինքնավերլուծությունն իրականացրել է հատուկ այդ նպատակով բուհի ռեկտորի հրամանով ձևավորված խումբը:

Նախապատրաստական փուլ

Ինքնավերլուծության վերաբերյալ ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով նշանակված՝ փորձագիտական գնահատման գործընթացը համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո, քարտուղարությունն ինքնավերլուծությունն ուսումնասիրելու համար տրամադրել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է համալսարանի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով համալսարանի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախապատրաստական այց

Նախապատրաստական այցը մասնակցությամբ մի կողմից՝ փորձագիտական խմբի ղեկավարի, ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի վարիչի ու փորձագիտական գնահատման գործընթացի համակարգողի, մյուս կողմից՝ համալսարանի ռեկտորի, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի և որակի ներքին ապահովման պատասխանատուի, տեղի է ունեցել փորձագիտական այցից տասներկու օր առաջ: Նախապատրաստական այցի ընթացքում համալսարանի հետ համաձայնեցվել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Դիտարկվել են ֆոկուս խմբային քննարկումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված սենյակները, հստակեցվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները, պայմանավորվածություն է ձեռք բերվել համալսարանի «Շիրակացի» մասնաճյուղ, ինչպես նաև մասնաշենքեր և ուսումնական բազաներ այցելելու կարգի ու պայմանների վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական խումբն այցն իրականացրել է 2014թ. ապրիլի 21-ից 26-ը: Ժամանակացույցի համաձայն փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են ՈԱԱԿ-ում կայացած հանդիպմամբ, որի նպատակն էր միջազգային փորձագետ Անդրե Գովարդի հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը:

Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ներառյալ համակարգողը և թարգմանիչը:

Այցը սկսվել և ավարտվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների դասախոս և ուսանող մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումներն ինչպես «Հայբուսակի» գլխամասում, այնպես էլ «Շիրակացի» մասնաճյուղում: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և ֆոկուս-խմբային հանդիպումներ է իրականացրել համալսարանի տարբեր մասնաշենքերում, ստորաբաժանումներում, այդ թվում՝ մասնաճյուղում և ուսումնական բազաներում:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքներ, իսկ այցի ավարտին ՈԱԱԿ-ում կայացած քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ ***անբավարար և բավարար:*** Ընդ որում այդ սանդղակով համալսարանի ինքնավերլուծության գնահատումն իրականացվել է ըստ յուրաքանչյուր չափանիշի համար սահմանված առանձին չափորոշիչների, իսկ փորձագիտական զեկույցն՝ ըստ չափանիշների:

Փորձագիտական գնահատման զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է համալսարանի ներկայացրած ինքնավերլուծության և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող մտքերի փոխանակության և համատեղ քննարկումների արդյունքում:

Փորձագիտական այցի ավարտից հետո երկու շաբաթվա ընթացքում փորձագետները ներկայացրել են փորձաքննության վերաբերյալ իրենց անհատական հաշվետվությունները: Դրանց հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Այնուհետև զեկույցն ուղարկվել է համալսարան՝ դիտողությունների և առարկությունների համար: Հաշվի առնելով համալսարանի ներկայացրած նկատառումները՝ սահմանված ձևաչափի համաձայն պատրաստվել է «Երևանի Հայբուսակ համալսարանում ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով իրականացված փորձաքննության զեկույցը»: Զեկույցի վերջնական տարբերակը հաստատվել է փորձագիտական խմբի ղեկավարի և համակարգողի ստորագրություններով:

---

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի «Հայբուսակ» համալսարանը հիմնադրվել է 1990թ.-ին և դարձել անկախ Հայաստանի առաջին մասնավոր բուհերից մեկը: 2012թ. դեկտեմբերից «Հայբուսակի» կազմում գործում է Գյումրիի «Շիրակացի» մասնաճյուղը: Որպես կրթական, գիտամշակութային հաստատություն՝ համալսարանն իր հիմնական առաքելությունն է սահմանել գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում՝ նպատակ ունենալով խթանել ուսանողների և դասախոսների մտավոր և ստեղծագործական ունակությունների զարգացումը, ձևավորել ժամանակակից աշխատաշուկային համապատասխան մասնագետներ, նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսական, սոցիալական, գիտական, մշակութային կյանքի զարգացմանը: Բուհի Ռազմավարական ծրագրով նախատեսված առանցքային խնդիրներից են՝ համալսարանում ապահովել բարձորակ կրթություն, հանրությանը տրամադրել լայնածավալ ծառայություններ, ընդլայնել հանրության ներգրավվածությունը համալսարանի գործունեության մեջ, մեծացնել դիմորդների համակազմը, բարձրացնել ֆինանսական կայունությունը, խթանել բուհի միջազգայնացումը:

Կրթություն

Երևանի «Հայբուսակ» համալսարանը 1999թ.-ից մասնագիտությունների մեծ մասի գծով անցել է բակալավրի, իսկ 2003թ.-ից՝ նաև մագիստրոսի որակավորումով երկաստիճան կրթական համակարգի. բժշկական մասնագիտությունների գծով երկաստիճան կրթահամակարգը (բակալավր, մագիստրոս) գործում է 2011թ.-ից: Համալսարանի գործունեության գերակա նպատակներից է բժշկագիտության, մանկավարժության, իրավագիտության, հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական գիտությունների ու մշակույթի զարգացումը հանրապետությունում, բուհում բարձրորակ կրթության ապահովումը: Համալսարանը կարևորում է այն հանգամանքը, որ կրթական գործունեությունն իրականացնում է սեփական երկու մասնաշենքերում, ինչը համարում է ուսումնառության և դասավանդման գործընթացների արդյունավետ կազմակերպման ու իրականացման գլխավոր երաշխիքը:

Երևանի «Հայբուսակ» համալսարանում իրականացվում է 15 կրթական ծրագիր: Բուհը պլանավորում է կրթության բոլոր մակարդակներում և աստիճաններում ուսումնառությունն իրականացնել բարձրորակ կադրերով, որոնք ունակ կլինեն կրթության մշտական բարեփոխման պայմաններում ակտիվ նորարական գործունեության՝ պահպանելով կրթական բարձր չափանիշներ: Ըստ 2012-2015 թ.թ. զարգացման ռազմավարության՝ բուհն առավել կարևոր խնդիր է հոչակել համալսարանի համալրումը որակյալ մասնագետներով:

Հետազոտություն

Երևանի «Հայբուսակ» համալսարանի 2010-2015թթ. Ռազմավարական ծրագրում հետազոտական ոլորտում որպես ռազմավարական նպատակներ շեշտադրված են՝ կրթության և գիտահետազոտական աշխատանքների փոխադարձ կապի մեծացումը, հետազոտական աշխատանքներում դասախոսական անձնակազմի և ուսանողության ներգրավման խրախուսումը: Համալսարանի հիմնադրման շրջանից ի վեր հետազոտություններ են իրականացվել «Ֆիտոթերապիա» և «Հայաստանի դեղաբույսեր» ուղղություններով, ինչի արդյունքում հրատարակվել է «Ֆիտոթերապիա» ութհատորյակը:

Միջազգայնացում

Երևանի «Հայբուսակ» համալսարանը ձգտում է մշակել և կենսագործել արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, որի նպատակն է խրախուսել արտաքին կապերի հաստատումը, ընդլայնել արտաքին կապերի աշխարհագրությունը, իրականացնել ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրեր:

Որակի ներքին ապահովում

Որակի ապահովման տիրույթում Երևանի «Հայբուսակ» համալսարանում 2009թ.-ից գործում է որակի ապահովման բաժին, որի գլխավոր նպատակն է նպաստել ուսուցման արդյունավետության բարձրացմանը՝ այն համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին: Բուհը պլանավորում է որակի ապահովման հետևյալ ընթացակարգերը՝

- կրթության որակի ապահովմանն ուղղված գործընթացների պարբերաբար ստուգում, գնահատում, երաշխավորությունների տրամադրում,
- բուհում ընթացող բոլոր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքում և վերլուծություն,
- հաշվետվողականություն և հաշվետվությունների հասանելիության ապահովում բոլոր շահակիցների համար,
- բուհի ստորաբաժանումների ինքնավերլուծության իրականացման մշտադիտարկում և խորհրդատվության ապահովում,
- ուսանողների և շրջանավարտների ներգրավում որակի ապահովման գործընթացներում,
- ներգրավված անձանց համար պարբերաբար վերապատրաստումների կազմակերպում որակի ապահովման ուղղությամբ:

Վերոնշյալ տեղեկատվությունը փորձագիտական խումբը դիտարկել է որպես համապատասխան տիրույթում բուհի հիմնական հավակնություններ և փորձագիտական գնահատում կատարելիս առաջնորդվել «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով:

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ. ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Երևանի «Հայբուսակ» համալսարանը՝ որպես կրթական, գիտամշակութային հաստատություն, իր հիմնական առաքելությունն է սահմանել գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, նպատակ ունենալով խթանել ուսանողների և դասախոսների մտավոր և ստեղծագործական ունակությունների զարգացումը, ձևավորել ժամանակակից աշխատաշուկայի համապատասխան մասնագետներ, նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսական, սոցիալական, գիտական, մշակութային կյանքի զարգացմանը:

ԲՈՒՀ-ի 2010-2015թթ. Ռազմավարական ծրագրով (ՌԾ) նախատեսված առանցքային խնդիրներից են՝ համալսարանում ապահովել բարձրակ կրթություն, հանրությանը տրամադրել լայնածավալ ծառայություններ, ընդլայնել հանրության ներգրավվածությունը համալսարանի գործունեության մեջ, մեծացնել դիմորդների համակազմը, բարձրացնել ֆինանսական կայունությունը, խթանել ԲՈՒՀ-ի միջազգայնացումը: Բուհը կոնկրետ խնդիր չի դրել՝ հստակորեն սահմանազատել գործարար նպատակները կրթական նպատակներից կամ դասակարգել դրանք:

Համալսարանի «Շիրակացի» մասնաճյուղն (ՀՀՇՄ) ըստ կանոնադրության համարվում է կրթական ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է հումանիտար, տնտեսագիտական, իրավագիտական, բնագավառներում ուսումնառության կազմակերպմանը՝ բարձրագույն մասնագիտական մակարդակներում՝ օրենքով նախատեսված կարգով և կրթական ծրագրերին համապատասխան: Որպես իր գործունեության ընդհանրական նպատակ և արդյունք համալսարանը հետապնդում է «գիտելիք – կարողություն - հմտություն» կապի միասնականությունը՝ առաջնորդվելով այն չափորոշիչներով, որոնք նախատեսում է Որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ):

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Համալսարանը գտնում է, որ իր կանոնադրությամբ ամրագրված և ՌԾ-ով կանխանշված առաքելությունը և նպատակներն ամբողջապես ուղղված են ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարմանը: Բուհում գործում են շահակիցների կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ, մասնավորապես՝ ուսանողների և շրջանավարտների շրջանում Կարիերայի կենտրոնի կողմից անցկացվող հարցումների համակարգ: Դրա հետ մեկտեղ, գլխամասային ստորաբաժանումների ուսանողներից շատերը, իսկ

մասնաճյուղում՝ թե՛ ուսանողները, թե՛ դասախոսները տեղյակ չեն համալսարանի Կարիերայի կենտրոնի առկայության մասին, իսկ վերջինիս կողմից կազմակերպվող հարցումներն իրականացվում են առանց պատշաճ մեթոդաբանական հիմնավորման, ստացված արդյունքներն էլ ըստ էության չեն վերլուծվում:

Բուհը չի ներկայացնում, թե ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման իր հայտարարած վերոնշյալ և այլ մեխանիզմները որքանով են արդյունավետ կամ ում կողմից են դրանք կիրառվում:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ՌԾ-ի նպատակների իրականացումը գնահատելու համար ԲՈՒՀ-ում գործում են մի շարք մեխանիզմներ և հաշվետվության կարգեր՝ ռեկտորի տարեկան զեկույցը, հիմնադիրների և Գիտական խորհրդի նիստերում տարբեր բաժինների ղեկավարների կողմից տրվող պարբերական հաշվետվությունները, նաև՝ դրանց վերլուծությունները: 2012թ.-ից ներդրվել է ԲՈՒՀ-ի համակողմանի գնահատման համակարգ, որը ենթադրում է նաև գործող բոլոր ստորաբաժանումների գործունեության արդյունքների հրապարակում:

Համալսարանի մոտեցմամբ իր առաջնային նպատակը և խնդիրները իրականացվում են Որակի ապահովման կենտրոնի ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն կատարող խմբի, նաև արտաքին շահակիցների կողմից ներկայացված առաջարկների հիման վրա: Սակայն այդ խմբում ներառված չեն ուսանողներ /բացի ՈՒԳԸ նախագահից / և արտաքին շահակիցներ:

Դատողություններ

Համալսարանի առաքելությունը, նպատակները և խնդիրներն առավելապես ներկայացված են ընդհանուր դրույթներով, թույլ են կապակցված և չեն շեշտադրում համալսարանի առանձնահատկությունները և յուրահատկությունները: Համալսարանի առաքելության և ռազմավարական նպատակների մեջ չեն շեշտադրված նրա հավակնությունները գիտահետազոտական գործունեության և հասարակությանը մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

Համալսարանի առաքելության ու ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման, գնահատման և բարելավման համար պաշտոնապես ընդունված ու մշտապես գործող մեխանիզմները և ընթացակարգերը դեռևս հստակեցված չեն: Ռազմավարական նպատակների մեծ մասն անիրատեսական են ֆինանսական խնդիրների և ոլորտի իրավաօրենսդրական դաշտում կատարված փոփոխությունների պատճառով:

Համալսարանում ռազմավարական պլանավորման մեխանիզմներն անկատար են և հնարավորություն չեն ընձեռում լիարժեքորեն իրականացնելու շահակիցների կարիքների հիմնավոր բացահայտումը և հաշվառումը: Պարզորոշված չէ, թե որքանով են համալսարանի առաքելությունը, նպատակները և խնդիրները կապվում ներքին և արտաքին շահակիցների կարիքների հետ, քանի որ նրանք չեն ներգրավված բուհի առաքելության ձևակերպման կամ վերանայման գործընթացներում:

Ըստ ամենայնի՝ համալսարանի շահակիցների (մասնավորապես՝ արտաքին) կարիքների ու պահանջմունքների վերհանման հստակ քաղաքականություն և արդյունավետ ընթացակարգեր դեռևս չեն մշակվել: Չնայած բուհը կիրառել է որոշ մեխանիզմներ ու

գործիքներ շահակիցների կարիքների ու պահանջմունքների վերհանման նպատակով, սակայն դրանք համակարգված չեն, աչքի չեն ընկնում բարձր արդյունավետությամբ, քանի որ վերջին հաշվով չեն նպաստում որակի կառավարման առկա համակարգի բարելավմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի «Հայբուսակ» համալսարանի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը հիմնականում բխում են որդեգրած առաքելությունից, սակայն ռազմավարական նպատակներն ու խնդիրները ձևակերպված են առավելապես ընդհանուր դրույթներով, ինչը հնարավորություն չի ընձեռում շեշտադրել համալսարանի առանձնահատկությունները, այդ թվում և՝ մրցակցային առավելությունները:

Եզրակացություն

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է *բավարար*:

Խորհրդատվություն

Անհրաժեշտ է՝

1) հստակեցնել բուհի առաքելությունը, ռազմավարական նպատակներն ու խնդիրները՝ դրանցում ներառելով համալսարաններին ներհատուկ գործունեության երեք հիմնական ոլորտները /կրթություն, հետազոտություն և ծառայությունների մատուցում հասարակությանը/,
2) մշակել «Ռազմավարության քարտեզ», որը հստակորեն կարտացոլի բուհի տեսլականը, առաքելությունը, ռազմավարական նպատակները և խնդիրները, առանցքային արժեքները, ակադեմիական միջավայրը, գործողությունների պլանները, կատարողականի ցուցիչները՝ հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների կարիքները,
3) փոխկապակցել համալսարանի առաքելությունը, ռազմավարական ծրագիրը և ֆինանսական պլանը:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 ***Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:***

Երևանի «Հայբուսակ» համալսարանը շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն է /ՍՊԸ/, որն ունի կառավարման աստիճանակարգված համակարգ հանձինս կառավարման բարձրագույն մարմնի՝ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի, կոլեգիալ մարմնի՝ Գիտական խորհրդի և, գործադիր մարմնի՝

Ռեկտորատի՝ ռեկտորի գլխավորությամբ: Գիտական խորհրդի կազմում ընդգրկված են բուհի ներքին շահակիցները:

Համալսարանի Գիտական խորհուրդը հաստատում է համալսարանի ռազմավարական ծրագրերը, համալսարանի ստորաբաժանումների կանոնադրությունները, կանոնակարգերը, ընթացակարգերը, ուսումնական պլանները, քննարկում է ամբիոնի վարիչների, համալսարանի տարբեր ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները կատարված աշխատանքների վերաբերյալ:

2.2 *ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:*

Համալսարանում դասախոսների և ուսանողների՝ իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցության պաշտոնական մարմիններն են՝ դեկանատները, ուսանողական պառլամենտը, ֆակուլտետների խորհուրդները, համալսարանի Գիտական խորհուրդը: Որոշումների կայացման գործընթացին մասնակցության մեխանիզմներ են դիտարկվում նաև համալսարանի երկու մասնաշենքերում տեղադրված բողոքի և առաջարկությունների արկղերը, դասախոսների և ուսանողների կողմից պրոռեկտորներին և ռեկտորին անմիջապես կամ դեկանատի միջոցով ուղղված գրավոր կամ բանավոր դիմումները:

Համալսարանում մշակված չեն որոշումներ կայացնելու գործընթացում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը երաշխավորող քաղաքականություն և ընթացակարգեր, չեն իրականացվում վերլուծություններ այդ գործընթացին տարբեր շահակիցների մասնակցության արդյունավետությունը գնահատելու և բարելավելու ուղղությամբ:

2.3 *ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:*

Իր առաքելության իրագործման նպատակով համալսարանում մշակվել են գործունեության որոշակի ծրագրեր, որոնք վերնագրված են որպես զարգացման ռազմավարական պլաններ կամ կարճաժամկետ և միջնաժամկետ պլաններ: Այդ ծրագրերով նախատեսված մի շարք նպատակներ կյանքի են կոչվել, մասնավորապես՝ ստեղծվել են կրթության որակի ապահովման կենտրոնը, միջազգային կապերի վարչությունը, ֆակուլտետների խորհուրդները, մշակվել են դեկանների ընտրության և վերամշակվել՝ ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգերը:

Այդուհանդերձ, միմյանցից տարանջատված ու հստակեցված չեն կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման խնդիրները, ընթացակարգերն ու գործիքները, չեն սահմանվում ստուգելի ու չափելի արդյունքներ, իրականացման հստակ քայլեր, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ և պատասխանատուներ:

2.4 *ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:*

Համալսարանը որոշակի գործունեություն իրականացնում է ուսանողների և նրանց ծնողների, շրջանավարտների ու գործատուների հետ հետադարձ կապ ապահովելու և իր գործունեության մեջ նրանց կարծիքները հաշվի առնելու ուղղությամբ: Սակայն մշակված չեն համապատասխան ընթացակարգեր ստացված արդյունքների հաշվառմամբ որոշումների կայացման գործընթացների վրա ազդելու և անհրաժեշտ բարելավումներ

իրականացնելու համար: Բուհը ձգտում է բացահայտել ու գնահատել իր գործունեության վրա ազդող գործոնները հիմնականում Որակի ապահովման և Կարիերայի կենտրոնների միջոցով, սակայն առայժմ հստակեցված չեն կիրառվելիք ընթացակարգերը:

2.5 ***Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):***

Երևանի «Հայբուսակ» համալսարանում և նրա «Շիրակացի» մասնաճյուղում իրականացվող վարչարարական գործառույթները միտված են կրթական գործընթացների պլանավորմանը, իրականացմանը և վերահսկողությանը, կրթական որակավորումների՝ համապատասխան չափորոշիչների և չափանիշների հետ համապատասխանության ապահովմանը, ուսումնական և աշխատանքային կարգապահության պահպանմանը, ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանմանը, որակի ապահովման համակարգի ձևավորման համար պայմանների ստեղծմանը:

Բուհում քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության գործընթացները համակարգված չեն որակի կառավարման սկզբունքի ներքո, թեև այդպիսի խնդիր արդեն դրված է: Հավաստիացվում է, որ բուհի կառավարման քաղաքականությունն ու վարչարարությունը բխում են համալսարանի ռազմավարական ծրագրից և այդ առումով համալսարանը պլանավորում և իրականացնում է մի շարք ընթացակարգեր: Միաժամանակ, բացակայում են պլանավորման և վերահսկման մատնանշված գործընթացների իրականացումը հաստատող հիմքերը: Առայժմ կառավարման որակի վերաբերյալ բուհում չեն կատարվում համապատասխան գնահատումներ, քանի որ հարցումների արդյունքում ստացված հարուստ տեղեկատվությունն ըստ էության չի վերլուծվում և, հետևաբար, չեն ձևավորվում որակի շարունակական բարելավման անհրաժեշտ հիմքերը:

2.6 ***ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:***

Մասնագիտությունների կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման ու դրանց որակի բարձրացման նպատակով համալսարանի Գիտական խորհրդում պարբերաբար քննարկվում և ընդունվում են որոշումներ, որոնք վերաբերում են ուսանողների ընթացիկ և եզրափակիչ գնահատման, ամփոփիչ ատեստավորման, պրակտիկաների կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

Համալսարանը հավաստիացնում է, որ տարբեր հարցումների արդյունքում ստացված տեղեկատվությունը հիմք է դառնում ուսումնական ծրագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու համար, սակայն մշակված չէ փոփոխությունների հստակ ընթացակարգ:

2.7 ***ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:***

Հիմնադրման շրջանից ի վեր, Երևանի Հայբուսակ համալսարանը բավականին ջանքեր է գործադրել հանրությանն իր գործունեության և ձեռքբերումների մասին տեղեկացնելու ուղղությամբ: Սակայն բուհում չկան սահմանված ընթացակարգեր գործող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և

անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվությունը հրապարակելու վերաբերյալ:

Դատողություններ

Բուհի կառավարման համակարգն ունի հիերարխիկ կառուցվածք, որում ներառված են հաշվետվողական և խորհրդատվական գործառույթներ իրականացնող բաղադրիչներ: Սակայն ներկայացված կազմակերպական կառուցվածքը լիովին չի արտացոլում հաստատության կանոնադրական դրույթները: Ներկայացված չէ «Շիրակացի» մասնաճյուղի ֆունկցիոնալ կապը համալսարանի առանձին ստորաբաժանումների հետ:

Համալսարանում կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ կան, բայց համակարգված չեն: Չի գնահատված բուհում գործող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ տրամադրվող ծավալուն տեղեկատվության կամ հրապարակումների արդյունավետությունը, չեն սահմանված տիրույթը կարգավորող համապատասխան ընթացակարգեր:

Կրթական գործընթացի բնականոն իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների մասին վերլուծությունների բացակայությունը խոչընդոտում է հաստատության գործունեության պլանավորման և որոշումների կայացման գործընթացներին, իսկ դրանցում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության ոչ բավականաչափ հստակ մեխանիզմը նվազեցնում է կայացված որոշումների արդյունավետությունը:

Ընդհանրապես, պլանավորվող գործընթացների փաստաթղթավորումն ավելի լավ հիմքերի վրա է դրված ամբիոնների, քան ամբողջ համալսարանի մակարդակով: Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների համակարգված վերլուծություն չի իրականացվում, ինչը բարդացնում է հեռանկարային զարգացում ապահովող ծրագրերի մշակման խնդիրը: Ռազմավարական, ինչպես նաև կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների մշտադիտարկման հստակ մեխանիզմների բացակայությունը նվազեցնում է համալսարանի կարողությունների արդյունավետ օգտագործման հնարավորությունները հեռավոր և մոտ ապագայում: Աչքի է զարնում նաև պլանների ժամկետայնության հետ կապված խառնաշփոթը:

Քաղաքականության և ընթացակարգերի վարչարարության համակարգը թույլ չի տալիս հավաստիանալ, որ բուհում ընկալվում և կենսագործվում են որակի կառավարման սկզբունքները (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում): Ըստ էության համալսարանում որակի ապահովման մշակույթը որպես համակարգ դեռևս ձևավորված չէ:

Համալսարանի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը համագործակցում է որակի ապահովման կենտրոնի, շրջանավարտների աշխատանքի տեղավորման և կարիերայի կենտրոնի, շրջանավարտների միության, ինչպես նաև դեկանատների և ամբիոնների հետ, սակայն հստակեցված չէ, թե ինչ է տալիս այս համագործակցությունը ծրագրերի և որակավորումների որակի մասին թարմացված և օբյեկտիվ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումների ապահովման և դրանց գնահատման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի «Հայբուսակ» համալսարանի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց

գործունեությունն միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը, թեև, հատկապես կառավարման էթիկայի կանոնների և որակի կառավարման սկզբունքի արմատավորման առումներով, բուհում վարչարարական գործունեության արդյունավետությունն ըստ էության գնահատված չէ:

Եզրակացություն

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է *բավարար*:

Խորհրդատվություն

Անհրաժեշտ է՝

1) բուհի կազմակերպական կառուցվածքում կատարել Կանոնադրությունից բխող համապատասխան ճշգրտումներ,
2) մշակել բուհի էթիկայի կանոններ և որոշումների կայացման ընթացակարգերը համապատասխանեցնել դրանց,
3) ստեղծել անհրաժեշտ հիմքեր՝ համալսարանի կրթական և այլ գործունեության համար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանության վերաբերյալ,
4) հստակեցնել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների նպատակները, բովանդակությունը և իրականացման մեխանիզմները,
5) կատարել համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների համակարգված վերլուծություն,
6) որոշումների կայացման գործընթացը դարձնել ավելի թափանցիկ (մասնավորապես՝ մասնաճյուղի շահակիցների համար),
7) կառավարման տարբեր մակարդակներում ներդնել որակի կառավարման սկզբունքով համակարգված գործընթացներ:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ. ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 *ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:*

Համալսարանն անցել է ուսուցման երկաստիճան համակարգին և իրականացնում է ուսուցում 15 կրթական ծրագրերով, որոնցից հատկապես կարևորում է բժշկագիտությունը, տնտեսագիտությունը, դիզայնը, մանկավարժությունը, իրավագիտությունը:

Մասնագիտությունների կրթական ծրագրերն ընդհանուր առմամբ բխում են ՀՀ ՈԱԾ-ի և պետական կրթական չափորոշիչների պահանջներից, համահունչ են համալսարանի

առաքելությանը, իրականացվում են՝ ելնելով ռազմավարական ծրագրերով նախատեսված նպատակների և խնդիրների լուծման անհրաժեշտությունից, սակայն բակալավրիատի ու մագիստրատուրայի ՄԿԾ-ների վերջնարդյունքներով սահմանվող մասնագիտական կոմպետենցիաները բավականաչափ հստակեցված չեն բոլոր մասնագիտությունների համար, իսկ որոշ առարկայական ծրագրեր բացակայում են:

Ուսումնառության արդյունքների ամփոփիչ ստուգումը և գնահատումը բակալավրիատում (բացառությամբ «Դիզայն» և «Հագուստի մոդելավորում» մասնագիտությունների) կատարվում է միմիայն պետական ավարտական քննությունների միջոցով, իսկ ավարտական աշխատանքների բացակայությունը, ըստ էության, հնարավորություն չի ընձեռում արդյունավետորեն ընտրելու կրթական հաջորդ աստիճաններում ուսումնառությունը շարունակողներին:

3.2 ***ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:***

Համալսարանում գերակշռում է դասավանդման դասախոսակենտրոն մոտեցումը, թեև ներկայում բուհը փորձում է կատարել կրթական ծրագրերի մշտադիտարկում և վերլուծություն՝ դասավանդման ուսանողակենտրոն մոտեցմանն անցում կատարելու նպատակով:

Համալսարանում ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության և դրանց արդյունավետության գնահատման հարցերը հստակորեն չեն կանոնակարգված, այդուհանդերձ՝ ֆակուլտետներում ուսուցանվող դասընթացների ծրագրերը կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ կատարվել և կատարվում են աշխատանքներ. այդ աշխատանքների ընթացքը և արդյունքները բավարար չափով արտացոլված չեն համապատասխան փաստաթղթերում, կամ դասընթացների նորացված ծրագրերում:

3.3 ***ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:***

Բուհում գործում է գնահատման 100 բալանոց բազմաբաղադրիչ համակարգ, որը միատեղում է դասերին հաճախումը և բուն ուսումնառության վերջնարդյունքների գնահատումը: Բուհն ուսանողների գնահատման համար մշակել է հատուկ սանդղակ, ըստ որի գիտելիքի պարզ վերարտադրումը գնահատվում է բավարար, ինքնուրույն որոնողական աշխատանքը՝ լավ, իսկ գերազանց է գնահատվում վերլուծական-համադրական, ստեղծագործական ինքնուրույն միտքը, տեսակետը, կարծիքը, աշխատանքը:

Բուհն իր առջև դրել է խնդիր՝ բացառել գրագողության հնարավորությունը, ապահովել ակադեմիական ազնվություն և մշակել միջոցառումներ գրագողության երևույթների դեմ պայքարի ուղղությամբ:

3.4 ***ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:***

Համալսարանն այլ հաստատությունների, մասնավորապես՝ ԵՊԲՀ-ի և ԵՊՀ-ի կրթական ծրագրերի հետ համահունչություն ստեղծելու նպատակով ձեռնարկում է որոշակի քայլեր: Թեև բուհն արձանագրում է, որ կատարում է ծրագրային բենչմարքինգ, սակայն դա

հաստատող իրական հիմքեր առկա չեն: Համալսարանում ՄԿԾ-երի՝ նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-երի հետ բովանդակային համեմատական վերլուծության մշակույթը դեռևս ձևավորման փուլում է: Բուհը չի ներկայացրել անհրաժեշտ հիմքեր ուսանողների ու դասախոսների շարժունությանը նպաստող կրթական ծրագրեր ունենալու վերաբերյալ:

3.5 ***ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:***

Կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման որոշ գործընթացների առկայությամբ հանդերձ՝ այդ հիմնախնդիրների լուծմանը միտված քաղաքականությունը բացակայում է, այն պլանավորվում է մշակել ապագայում:

Դատողություններ

Բուհը ձգտել է ՄԿԾ-ները մշակել և իրականացնել առաքելության և ռազմավարության գերակա ուղղություններին համապատասխան: Սակայն գերակա ուղղությունների ընտրությունը բավականաչափ հիմնավորված չէ բուհի ռազմավարական պլանում: Համալսարանում իրականացվող առանձին ՄԿԾ-երը դեռևս չեն հանդիսանում հաստատության պլանավորման բաղկացուցիչ, քանի որ ՄԿԾ-ների նկարագրերը բավականաչափ հստակ չեն արտացոլում դրանց առանձնահատկությունները, մասնավորապես՝ անհրաժեշտ ռեսուրսների նկատմամբ քանակական և որակական պահանջների, վերջնարդյունքների գնահատման մեթոդների, անհատական/ինքնուրույն աշխատանքների կազմակերպման, ուսումնամեթոդական նյութերով ուսումնառողների ապահովվածության առումներով:

Բուհում դեռևս մշակված չէ կրթական ծրագրերի մշտադիտարկման, դրանց արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն: Դասավանդման մեթոդների համապատասխանությունը ուսումնառության ակնկալվող արդյունքներին հիմնականում թողնված է դասավանդողների հայեցողությանը՝ առանց միասնական մոտեցման: Դասավանդման մեթոդների ընտրության հարցում հաշվի չեն առնվում ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացվող հարցումների արդյունքում վեր հանված խնդիրները, քանի որ հարցումների արդյունքների վերլուծությունը և ամփոփումը համակարգված չէ:

Համալսարանում ակադեմիական ազնվության ապահովման և գրագողության դեմ պայքարի հատուկ քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ դեռևս մշակված և ներդրված չեն, ինչը լուրջ մարտահրավեր է և առաջնահերթ խնդիր՝ ՄԿԾ-երի համապատասխան որակավորումների պահանջների ապահովման հարցում:

Համալսարանի մասնագիտությունների մի շարք կրթական ծրագրեր զգալի չափով փոխկապակցված են՝ մասամբ ապահովելով մի ծրագրից մյուսը ուսանողների ներքին շարժունությունը, իսկ արտաքին շարժունության նախադրյալը կրեդիտային համակարգն է: Թեև բուհը ներկայացրել է ուսումնական հաստատությունների ցանկ, որոնց հետ ունի ուսանողների փոխանակման գործող համաձայնագրեր, ինչպես նաև՝ ուսանողների ներհոսքի ու արտահոսքի վիճակագրությունն ըստ տարիների, իրականում ՄԿԾ-ների պլանավորման և իրականացման գործընթացները փաստացիորեն չեն ապահովում դասավանդողների և ուսումնառողների ներհանրապետական և միջազգային շարժունությունը:

ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը համալսարանին լիարժեք հնարավորություն չի տալիս ճշգրտել իր կողմից առաջարկվող ծրագրերի առանձնահատկությունները, ուժեղ և թույլ կողմերը՝ զգալիորեն սահմանափակելով համադրելիության և ճանաչելիության հնարավորություններն այլ բուհերի կողմից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի «Հայբուսակ» համալսարանի ՄԿԾ-ները հիմնականում համապատասխանում են հաստատության առաքելությանը, սակայն դրանք չեն անցնում որակի ներքին ապահովման շրջափուլով, ինչպես նաև չեն նպաստում հաստատության միջազգայնացմանը, քանի որ ձևավորված չեն համապատասխան մեխանիզմներ՝ գնահատելու բուհի ՄԿԾ-ները և դրա հիման վրա մշակելու դրանց բարելավման քաղաքականությունը:

Եզրակացություն

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է ***անբավարար***:

Խորհրդատվություն

Անհրաժեշտ է՝

1) վերանայել համալսարանի ՄԿԾ-ները՝ կիրառելով որակի կառավարման սկզբունքը՝ «պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում»,
2) հստակ տարանջատել առանձին ՄԿԾ-ների վերջնարդյունքները բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճաններում,
3) հստակեցնել ՄԿԾ-ների վերջնարդյունքների գնահատման ընթացակարգերն ու մեխանիզմները,
4) ներդնել ուսումնառության և դասավանդման ուսանողակենտրոն արդիական մեթոդներ,
5) մշակել և ներդնել դասավանդողների և ուսումնառողների ակադեմիական շարժունությանը նպաստող ՄԿԾ-ներ, ուսումնական պլաններ և առարկայական ծրագրեր:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ. ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ***ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:***

Վերջին տարիներին հանրապետությունում բուհերի ընդունելության կարգում կատարված փոփոխությունների արդյունքում Երևանի «Հայբուսակ» համալսարանի բակալավրիատում ուսանողների ընդունելությունը կտրուկ կրճատվել է, մագիստրատուրայում՝ որոշ չափով աճել՝ մագիստրոսական ծրագրերի գծով ուսանողների հավաքագրման գործընթացների ակտիվացման շնորհիվ: Սակայն ընդհանուր հաշվարկով ուսանողների թիվը կրճատվել է կրկնակի:

Բուհն իրականացնում է դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված որոշ քայլեր, ինչպես նաև տեղեկություններ է տարածում տեղեկատվական բուկլետների և ՁԼՄ-ների միջոցով:

Համալսարանից դուրս մնալու գլխավոր պատճառը ուսման վարձի վճարման պայմանագրային պարտավորությունների չկատարումն է, թեև համալսարանը կիրառում է ուսման վարձերի զեղչման մեխանիզմ: Անբավարար առաջադիմության պատճառով հեռացումները հազվադեպ են:

Բուհում կիրառվում է խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների անցկացման պրակտիկա միայն որոշակի կարգավիճակի ուսանողների համար:

4.2 ***ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:***

Բուհում կրթական կարիքների վերհանմամբ զբաղվում են դեկանատները, ֆակուլտետային խորհուրդները, ուսանողական պառլամենտը, ամբիոնները: Դրան նպաստում են ուսանողների մասնակցությունը համալսարանի գիտխորհրդի և ֆակուլտետային խորհուրդների աշխատանքներին, կուրսերի ավագների հանդիպումները ռեկտորի հետ, արագ արձագանքման արկղերը, Հայբուսակ» համալսարանի պաշտոնական կայքէջի միջոցով ապահովվող հետադարձ կապը:

4.3 ***ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:***

Համալսարանում և նրա «Շիրակացի» մասնաճյուղում ուսանողներին տրամադրվում է որոշակի խորհրդատվական աջակցություն՝ կապված մասնագիտացման, գործնական հմտությունների զարգացման, որոշակի դասընթացներին նրանց մասնակցության ապահովման հետ:

Հաստատված ժամանակացույցով լրացուցիչ պարապմունքներ կազմակերպվում են միայն ավարտական կուրսի ուսանողների համար՝ ամփոփիչ ատեստավորման քննական առարկաներից, իսկ մնացյալ դեպքերում դրանք անկանոն բնույթ ունեն:

4.4 ***ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:***

Համալսարանի վարչական յուրաքանչյուր ստորաբաժանում օժանդակում է ուսանողներին կամ ուղղորդում համապատասխան ծառայություններ ստանալու հարցում: Ուսանողները ռեկտորին կարող են դիմել ընդունելության ժամերին, իսկ այլ ստորաբաժանումների աշխատակիցներին՝ ամեն օր դասերից հետո: Կարող են օգտվել նաև «Հայբուսակ» համալսարանի պաշտոնական կայքէջի «Հարց ռեկտորին» բաժնից: Այդուհանդերձ, համալսարանում դեռևս սահմանված չէ վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

4.5 ***ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:***

«Հայբուսակ» համալսարանում գործում է Կարիերայի կենտրոն, որը հիմնականում իրականացնում է ուսանողներին ու շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու հետ

կապված գործառույթներ՝ թափուր աշխատատեղերի մասին տեղեկությունների հայթայթում և տարածում ուսանողության շրջանում, ձեռնարկությունների հետ կապերի հաստատում, դրանց գործունեության մեջ ուսանողների մասնակցության կազմակերպում, ինչպես նաև ուսանողների հարցումներ: Սակայն համալսարանի, հատկապես մասնաճյուղի ուսանողները բավականաչափ իրազեկված չեն Կարիերայի կենտրոնի գործունեության մասին:

4.6 ***ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:***

«Հայբուսակ» համալսարանում գործում է ուսանողական գիտական ընկերություն (ՈԻԳԸ), որը կազմակերպում է ուսանողական կոնֆերանսներ, սեմինարներ, գիտահանրամատչելի դասախոսություններ: Բուհում գործում է հետազոտական երկու ծրագիր («Ավանդական բժշկություն և ֆիտոթերապիա» և «Դեղաբույսեր»), սակայն դրանցում ուսումնառողներ ներգրավված չեն: Ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին ոչ էական դերակատարում ունի և առավելապես սահմանափակվում է մագիստրոսական թեզերի կատարմամբ:

4.7 ***ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:***

«Հայբուսակ» համալսարանում ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող անմիջական հիմնական կառույցն ուսանողական պառլամենտն է, իսկ ընդհանուր համակարգմամբ զբաղվում են դեկանատներն ու ռեկտորատը՝ իրենց կողմից լուծման ենթակա խնդիրների մասով:

Ուսանողներն իրենց իրավունքներին և պարտականություններին կարող են տեղեկանալ դեկանատներից, ուսումնաօժանդակ վարչությունից, ամբիոններից, «Հայբուսակ» համալսարանի պաշտոնական կայքէջից, իրենց հետ կնքվող պայմանագրերից:

4.8 ***ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:***

«Հայբուսակ» համալսարանում և մասնաճյուղում ստեղծված են որակի ապահովման կենտրոններ (համապատասխանաբար՝ 2009 և 2012 թվականներից): Համալսարանում որպես ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ կիրառվում են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների, ինչպես նաև ստացած կրթության որակի մասին շրջանավարտների հարցումները, տարբեր հաշվետվությունները (ռեկտորի, ամբիոնի վարիչների տարեկան, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների): Սակայն գնահատման և որակի ապահովման մեխանիզմների կատարելագործումը հիմնված չէ իրականացված հարցումների արդյունքների վերլուծության վրա:

Մասնաճյուղում այս ուղղությամբ կատարվող աշխատանքներն էլ ավելի թույլ հիմքերի վրա են. չեն անցկացվում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունները գնահատող հարցումներ (բացառությամբ դասախոսների գնահատման հարցման, որը ոչ պարբերական բնույթ է կրում), իսկ մասնաճյուղի որակի ապահովման կենտրոնը դեռևս որևէ գործունեություն չի ծավալել:

Դատողություններ

Ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմները վերջին մի քանի տարիների ընթացքում ուսանողների թվաքանակի աճ չեն ապահովում, ինչը հանգեցնում է բուհի ֆինանսական հնարավորությունների որոշ սահմանափակման: Համալսարանի կողմից համակողմանիորեն չեն վերլուծվել ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման ներքին մեխանիզմների ձևավորման հարցերը:

Համալսարանից ուսանողների ազատման գլխավոր պատճառը ուսման վարձը չվճարելն է: Անբավարար առաջադիմության պատճառով հեռացված ուսանողների աննշան թիվը մասամբ բացատրվում է ուսանողների անբարեխիղճ ուսումնառությամբ, սակայն հիմնական պատճառը որակի ապահովման գործուն համակարգի բացակայությունն է:

Ուսանողների համար լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների կազմակերպումը համալսարանում բավարար չափով և կանոնավոր կերպով չի իրականացվում, հատկապես ցածր կուրսերում:

Համալսարանի վարչական ստորաբաժանումների կողմից ուսանողներին որոշակի օժանդակություն և ուղղորդում տրամադրվում է, սակայն այդօրինակ գործընթացները կանոնակարգված բնույթ չեն կրում:

Թեև համալսարանում ստեղծված է կարիերայի կենտրոն, այդուհանդերձ նա չի իրականացնում նմանօրինակ կենտրոններին բնորոշ մի շարք գործառույթներ, ինչպիսիք են՝ գործատուների հետ հետադարձ կապի ապահովումը, ուսանողների կարիերայի հետագծումն ու ուղղորդումը, իսկ մասնաճյուղում փաստորեն որևէ ակտիվ գործունեություն չի էլ ծավալում:

Համալսարանն ակտիվ նախաձեռնողականություն չի ցուցաբերում և լուրջ աշխատանքներ չի կատարում ուսումնառողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ: Դեռևս չկա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովման պաշտոնապես ընդունված քաղաքականություն կամ հաստատված ընթացակարգ, չնայած այդ ուղղությամբ ամբիոններում որոշ գործընթացներ տեղի են ունենում:

Բակալավրիատի կրթական աստիճանում սովորող ուսանողների մեծ մասի համար ավարտական աշխատանքներ չնախատեսելը սահմանափակում է համապատասխան ունակություններով օժտված ուսանողներին հետագայում հետազոտական աշխատանքներում ներգրավելու հնարավորությունները, իսկ ինքնուրույն և կուրսային աշխատանքներն իրենց թեմատիկայով ու բովանդակությամբ լիարժեքորեն չեն փոխարինում ավարտական աշխատանքներին:

Իրենց իրավունքներին և պարտականություններին ուսանողների տեղեկացումը տարերային բնույթ է կրում, որի արդյունքն է, մասնավորապես, իրավունքների պաշտպանության վերաբերյալ ուսանողների ցածր տեղեկացվածությունը:

Բուհում հստակեցված չեն ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման նպատակով անցկացված հարցումներից ստացված արդյունքների վերլուծության և կիրառման մեխանիզմները, ինչպես նաև տարբեր հաշվետվությունների, քննարկումների և դրանց առնչվող որոշումների գործադրման ընթացակարգերը: Ներկայումս իրականացվող հարցումները կատարվում են առանց հստակ մեթոդաբանության, ընթացակարգի, պարբերականության, իսկ ստացված արդյունքները

վկայում են, որ համալսարանում ըստ ամենայնի բացակայում է քննադատական ոգին ու պահանջատիրությունը, հակառակը՝ բարձր է բավարարվածության և գոհունակության մակարդակը: Մինչդեռ այս հանգամանքը կարող է լրացուցիչ խոչընդոտ հանդիսանալ երևույթների իրատեսական վերլուծության և հիմնավորված որոշումների կայացման համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ արդյունավետ կրթական միջավայր ապահովելու նպատակով համալսարանն ուսանողներին տրամադրում է որոշակի աջակցություն՝ ուսանողների համար հնարավորություններ ստեղծելով ստանալու կրթական և համապատասխան այլ ծառայություններ, սակայն բավարար միջոցառումներ չի իրականացնում համալսարանի կառավարման և որակի ապահովման գործընթացներում նրանց ներգրավվածությունը մեծացնելու համար:

Եզրակացություն

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է ***բավարար***:

Խորհրդատվություն

Անհրաժեշտ է՝

1) վերլուծել ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործող ընթացակարգերի ու մեխանիզմների արդյունավետությունը և դրա հիման վրա մշակել բարելավումների պլաններ,
2) ներդնել ուսանողների կարիքների բացահայտման հստակ մեխանիզմներ,
3) մշակել ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ, ուսանողների իրավունքներն ու պարտականություններն արտացոլող փաստաթուղթ,
4) վերլուծել ուսանողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը,
5) պարբերական դարձնել լրացուցիչ պարապմունքներն ու խորհրդատվությունները՝ մշակելով համապատասխան ժամանակացույց,
6) ընդլայնել կապը և համագործակցությունը մասնագիտական ոլորտների հետ՝ ուսանողների մեջ ավելի շատ գործնական հմտություններ և կարողություններ ձևավորելու նպատակով,
7) ներդնել ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու մեխանիզմներ,
8) ուսումնասիրել աշխատաշուկայի պահանջները և դրանց արդյունքներն ուղղորդել կրթական համապատասխան բարեփոխումներ կատարելուն,
9) ներդաշնակեցնել համալսարանի և մասնաճյուղի կարիերայի և որակի ապահովման կենտրոնների աշխատանքները:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ. ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Համալսարանում առկա են համապատասխան որակավորում ունեցող պրոֆեսորա-դասախոսական կազմի ընտրության իրավական հիմքեր և գործիքներ: Պրոֆեսո-բադասախոսական անձնակազմի մասնագիտական գիտելիքները, հմտությունները և կարողությունները հիմնականում համապատասխանում են ՀՀ Որակավորումների Ազգային Շրջանակի (ՈԱՇ) վեցերորդ (բակալավրի) և յոթերորդ (մագիստրոսի) մակարդակների պահանջներին: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրության, աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականությունը և ընթացակարգերը արտացոլված են համասարանի կանոնադրությունում, ռազմավարական ծրագրում և համապատասխան կանոնակարգերում:

Դասավանդող անձնակազմի մասնագիտական որակավորումները ընդհանուր առմամբ համապատասխանում են համալսարանի առաքելությանը և կրթական ծրագրերի պահանջներին: Վերջիններս հաշվի են առնվում աշխատանքի ընդունման ժամանակ և դրվում մշտադիտարկման հիմքում: Ըստ 2012-2015 թթ. զարգացման ռազմավարության՝ բուհն առավել կարևոր խնդիր է հոչակել համալսարանի համալրումը որակյալ մասնագետներով:

5.2 *ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:*

Համալսարանն իր պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունը կատարում է համաձայն դասավանդողների մասնագիտական որակավորումների: Մագիստրոսական կրթական ծրագրերում ներառված են հիմնականում գիտական աստիճան ունեցող պրոֆեսորներ և դոցենտներ կամ փորձառու դասախոսներ: Հատուկ մասնագիտական առարկաների դասավանդման համար նույնպես դասախոսը պետք է ունենա գիտական աստիճան և դասավանդման որոշակի փորձ: Սակայն բուհում չեն ստեղծված համապատասխան հիմքեր, որոնք կհավաստեին, որ յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

5.3 *ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:*

Համալսարանը հավաստիացնում է, որ սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման որոշակի ընթացակարգեր, իսկ նրանց գնահատման քաղաքականությունը ուղղված է առաջին հերթին մասնագիտական որակների համապատասխանությանը կրթական ծրագրերի առաքելությանը և նպատակներին: Ընդ որում՝ կախված ներքին և արտաքին շահակիցների պահանջների փոփոխությունից՝ գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը պարբերաբար վերանայվում են:

Սակայն վերոնշյալ պնդումը, ինչպես նաև՝ գործընթացների արդյունավետությունը հիմնավորող փաստարկները և վերլուծությունները ներկայացված չեն, այդ ուղղությամբ իրականացվող քայլերը դեռևս համակարգված, ամբողջական ու նպատակային բնույթ չունեն:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Համալսարանի Կրթության որակի ապահովման կենտրոնը պարբերաբար կազմակերպում է դասավանդող անձնակազմի թրեյնինգներ նրանց մանկավարժական հմտությունների զարգացման նպատակով: Դասախոսական կազմի գնահատման վերջնական փուլը ատեստավորումն է, որի միջոցով գնահատվում են դասախոսների մասնագիտական գիտելիքները և դասավանդման հմտություններն ու կարողությունները: Բուհը կարևորում է դասախոսական կազմի կողմից օտար լեզուներ սովորելու խնդիրը՝ հետագայում այդ լեզուներով առարկաները դասավանդելու նպատակով:

Համալսարանում մշակված չեն պահանջվող որակավորումներին համապատասխան դասավանդողների կոմպետենցիաների շրջանակի ընդլայնումն ապահովող հիմքերը, դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների. դասավանդողների կատարելագործման թեմաները և ժամանակացույցը:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Համալսարանում մշակված չէ պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունը և ընթացակարգերը ներկայացնող որևէ հիմք: Հստակ չեն այն մեխանիզմները, որոնցով փաստացի երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ինքնավերլուծության զեկույցի համաձայն՝ համալսարանում մշակվել և իրականացվում է դասախոսական անձնակազմի, մասնավորապես երիտասարդ դասախոսների խրախուսման քաղաքականություն. գործում են դասախոսական կազմի գործունեության գնահատման մեխանիզմներ, որոնք նպաստում են նրանց որակավորման բարձրացմանը, և ըստ այդմ կիրառվում է խրախուսման համակարգ: Սակայն համալսարանը չներկայացրեց համապատասխան հիմքեր՝ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ուղղությամբ ներկայում իրականացվող գործընթացների, նրանց մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզմների և դրանց կիրառման արդյունավետության վերաբերյալ:

5.7 *ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:*

Համալսարանի հավաստիացմամբ՝ բուհի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեությունն ուղղված է համալսարանի առաքելության և 2010-2015թթ. ռազմավարական ծրագրի խնդիրների և նպատակների իրականացմանը: Սակայն հստակորեն չեն ներկայացվում ռազմավարական նպատակների իրականացման համար բավարար վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ունենալու համար կիրառվող ընթացակարգերն ու մեխանիզմները:

Համալսարանում գործող ոչ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներն ունեն համապատասխան կանոնակարգեր, իսկ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կայունության ապահովման, նրանց գործունեության որակի ապահովման, գործառույթների իրականացման ապահովման պարտականությունը կրում է հիմնականում Ռեկտորատը՝ ի դեմս ռեկտորի: Համալսարանում ըստ էության չեն ներդրված վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության գնահատման մեխանիզմներ, չի վերլուծվում այդպիսի գործունեության արդյունավետությունը:

Դատողություններ

Համալսարանն ունի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության սահմանված քաղաքականություն և ընթացակարգ, որը, սակայն, երբեք չի վերլուծվել որակի կառավարման սկզբունքով: Բուհը չունի դասախոսական կազմի գնահատման քաղաքականությունը ներկայացնող փաստաթղթային փաթեթ, հստակեցված չեն ՄԿԾ-ներով ամրագրված վերջնարդյունքներին դասախոսների համապատասխանության չափանիշները կամ նրանց գնահատման մեթոդներն ու գործիքակազմը:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի գործող համակարգը որոշակի բարելավման կարիք ունի, մասնավորապես գնահատման համակարգի կատարելագործման, համապատասխան վերապատրաստման ծրագրերի մշակման և ֆինանսական միջոցների հատկացման հստակ ընթացակարգերի արմատավորման ուղղություններով:

Համալսարանում մշակված չեն ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքային պարտականությունների նկարագրիչները, ինչը բարդացնում է նրանց աշխատանքի գնահատման խնդիրը, բացակայում է նաև նրանց ընտրության կանոնակարգված մեխանիզմը: Համալսարանը խնդիր է դնում ապահովելու պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի՝ օտար լեզուների իմացության բավարար մակարդակ, որի իրականացումը որակական առաջընթացի ապահովման կարևոր միջոց է:

Բուհում դեռևս մշակված չեն պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացն ու կայունությունն ապահովող քաղաքականություն և ընթացակարգեր:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի «Հայբուսակ» համալսարանը հիմնականում ապահովված է ՄՈՒՀ-ի առաքելության և ՄԿԾ-ների նպատակների իրականացման համար մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով, թեև բուհի անձնակազմի մասնագիտական որակների համապատասխանությունը կրթական ծրագրերի նպատակներին, ինչպես նաև աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը, ըստ էության, գնահատված չէ:

Եզրակացություն

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է *բավարար*:

Խորհրդատվություն

Անհրաժեշտ է՝

1) մշակել ատեստավորման, փոխադարձ գնահատումների, կատարողականների վերլուծության, երիտասարդ դասախոսների ուղղորդման, որակավորման

բարձրացման, խրախուսման և այլ ընթացակարգեր, որոնցով հնարավոր կլինի ավելի հստակ գնահատել պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի մասնագիտական որակների համապատասխանությունը ՄԿԾ-ների նպատակներին և ակնկալվող արդյունքներին,

2) մշակել համալսարանի, ֆակուլտետների, կրթական ծրագրերի մակարդակներում պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների բարելավման պլաններ,
3) վերլուծել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի հոսունությունը մի քանի տարիների կտրվածքով՝ անձնակազմի կայունությունն ապահովող մեխանիզմների արդյունավետության գնահատման նպատակով,
4) բարձրացնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի օտար լեզուների իմացության մակարդակը՝ նրանց միջազգային շարժունությունը խթանելու նպատակով:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Բուհի 2010-2015թթ. զարգացման ծրագրում հետազոտական ոլորտում որպես ռազմավարական նպատակներ ներկայացված են՝ կրթության և գիտահետազոտական աշխատանքների փոխադարձ կապի ամրապնդումը, հետազոտական աշխատանքներում դասախոսական անձնակազմի և ուսանողության ներգրավման խրախուսումը՝ հետազոտական հիմնական ուղղություններ ընտրելով ֆիտոթերապիան և Հայաստանի դեղաբույսերը:

Համալսարանը խնդիր է դրել՝ մշակել մեխանիզմներ, որոնք կնպաստեն հետազոտությունների ծավալի աճին և հետազոտական աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներգրավվածությանը: Այդուհանդերձ, բուհը չի իրականացրել հետազոտական ՄԿԾ-ներ՝ ասպիրանտուրայի կամ դոկտորանտուրայի մակարդակում:

Վերանայման փուլում է գտնվում տարբերակված աշխատավարձի նշանակման նոր կարգը, որն, ի տարբերություն նախորդի, վարձատրության համակարգում կարևորելու է դասավանդողի կատարած գիտահետազոտական աշխատանքների ծավալը:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Համալսարանն արձանագրում է, որ հիմնադրումից ի վեր հետազոտություններ են իրականացվել «Ֆիտոթերապիա» և «Հայաստանի դեղաբույսեր» ուղղություններով, ինչի արդյունքում հրատարակվել է «Ֆիտոթերապիա» ութհատորյակը: 2012թ. համալսարանի գիտխորհրդի որոշմամբ ստեղծվել է Ավանդական և այլընտրանքային բժշկության ամբիոնը

(ՀՀ ԱՆ Առողջապահության ինստիտուտի հետ համատեղ), հիմնվել է գիտական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնը:

Սակայն սույն փաստերը, ինչպես նաև բուհի կողմից հիշատակվող միջոցառումները /կոնֆերանսների կազմակերպում, մասնակցություն գիտաժողովներին, ժողովածուների հրատարակում և այլն/, որոնք առնչվում են հետազոտական ոլորտին, կրում են հատվածային բնույթ և բնութագրելի չեն որպես գիտահետազոտական գործունեության երկարաժամկետ ռազմավարություն:

Համալսարանի ինքնագնահատմամբ՝ գիտական հետազոտությունների զարգացման ուղղությամբ համալսարանի քաղաքականությունը վերջին երեք տարիներին առավել արդյունավետ է դարձել: Սակայն բուհը որևէ մեխանիզմով չի վերլուծել հետազոտական ոլորտում առկա հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը:

6.3 *ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:*

Համալսարանն առանց համապատասխան հիմքերի հավաստիացնում է, որ բուհի հետազոտական աշխատանքների քաղաքականությունը բխում է համալսարանի Կանոնադրությունից և Ռազմավարական ծրագրից, իսկ որպես ակադեմիական ազնվության երաշխավորման և գրագողության կանխարգելման մեխանիզմ նշում է, թե համալսարանի ժողովածուներում հրապարակվող նյութերը ուղարկվում են գրախոսման համապատասխան բնագավառի մասնագետներին: Սակայն նմանօրինակ հավաստիացումները դեռևս չեն վկայում, որ բուհն ապահովում է հետազոտությունների պատշաճ մակարդակով իրականացումը և իր զարգացումը:

Հետազոտության և զարգացման նպատակով ֆինանսական միջոցների հատկացում պլանավորված չէ, բացակայում են հետազոտական աշխատանքների ֆինանսավորման համակարգված ծրագրերն ու ընթացակարգերը:

6.4 *ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:*

Հիմնադրումից ի վեր համալսարանը հետազոտական աշխատանքների գծով որևէ միջազգային դրամաշնորհային ծրագիր կամ պետական թեմատիկ ֆինանսավորմամբ գիտահետազոտական աշխատանք չի իրականացրել:

Բուհում մշակված չեն ընթացակարգեր ԱՊՀ կամ օտարերկրյա գրախոսվող ամսագրերում հրապարակումների կազմակերպման կամ դրանց խրախուսման համար:

Համալսարանի ներկայացմամբ՝ վերջին 5 տարում օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում տպագրված է թվով 26 աշխատություն, ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում՝ 19 աշխատություն, ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում՝ 137 աշխատություն: Սակայն փորձագիտական այցի ընթացքում թվարկված աշխատությունները ներկայացնելու փորձագետների պահանջը չբավարարվեց:

Համալսարանում դեռևս չեն մշակվել և ներդրվել միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածության խրախուսման մեխանիզմներ և ընթացակարգեր, ինչը մասամբ պայմանավորված է նաև ֆինանսական միջոցների սահմանափակությամբ և ոչ նպատակային պլանավորմամբ:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Բուհում ուսանողները կատարում են կուրսային աշխատանքներ և գրում մագիստրոսական թեզեր, ինչն ինքնաբերաբար համարվում է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմ: Իրականում բուհը կրթական ու հետազոտական գործունեության փոխկապվածության ապահովման քաղաքականություն, ընթացակարգեր և արդյունավետ մեխանիզմներ չունի:

Համալսարանում գործող ՈւԳԸ-ը, իր գործառույթներով դեռևս չի հանդիսանում ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու կարևոր օղակ:

Դատողություններ

Բուհն իր ռազմավարական պլանում չի ընդգրկել հստակ մշակված հետազոտական ծրագրեր՝ բավարարվելով միայն «Ֆիտոթերապիա» և «Հայաստանի դեղաբույսեր» ուղղությունների մատնանշմամբ և առանց հիմնավորելու, թե ինչ սկզբունքներով են ընտրվել այդ ուղղությունները, որն է ընտրված ուղղությունների համար նախատեսված ֆինանսական միջոցների բաշխման և օգտագործման քաղաքականությունը:

Համալսարանում, ըստ էության, դեռևս չկա հետազոտական գործունեության ոլորտում համալսարանի հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն և պլանավորման հստակ ընթացակարգ, որը պայմանավորված է նաև պահանջվող ռեսուրսների, նախատեսվող վերջնարդյունքների ու ժամկետների անորոշությամբ:

Համալսարանը, կարևորելով միջազգային կապերը, կրթական և գիտական ոլորտներում համագործակցությունը եվրոպական համալսարանների հետ, չի ուրվագծում այն ուղիները, որոնք կխթանեն միջազգայնացումը գիտական ոլորտում: Հրատարակված աշխատությունների ընդհանուր թիվը դեռևս հետազոտական գործունեության միջազգայնացման փաստարկ չէ:

Ուսանողների հետազոտական աշխատանքների գերակշիռ մասը սահմանափակվում է ռեֆերատներով և մագիստրոսական թեզերով կամ ՈՒԳԸ-ի սեմինարներում զեկուցումներով, որոնք, սակայն, ներառված չեն միասնական գիտական թեմատիկայի մեջ և չեն ապահովում հետազոտության արդյունքների գործնական կիրառությունը: Հստակ չէ հետազոտական նախագծերում և ամբիոնների գիտահետազոտական գործունեության մեջ ուսանողների ներգրավման մեխանիզմը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի «Հայբուսակ» համալսարանը անհրաժեշտ մակարդակով չի ապահովում հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Եզրակացություն

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6 -ի պահանջներին գնահատվում է ***անբավարար***:

Խորհրդատվություն

Անհրաժեշտ է՝

1) հստակեցնել հետազոտական ոլորտում համալսարանի հետաքրքրությունների ու հավակնությունների կենսագործման քաղաքականությունը բուհի ռազմավարական ծրագրում,

2) մշակել հետազոտական ոլորտի հստակ ձևակերպված միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր,
3) ձևավորել հետազոտությունների ու նորարարությունների զարգացմանը միտված արդյունավետ գործելակերպ,
4) մշակել հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականություն,
5) մշակել բուհում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1 *ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:*

«Հայբուսակ» համալսարանն ունի 2 մասնաշենք, 54 լսարան, 29 ուսումնական կաբինետ, լաբորատորիա, արհեստանոց, գրադարան և ընթերցասրահ, ուսումնական բազաներ (բուժհաստատություններ): Համալսարանը կարևորում է այն հանգամանքը, որ կրթական գործունեությունն իրականացնում է սեփական մասնաշենքերում, ինչը բուհը համարում է ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման ու իրականացման առաջնային երաշխիք:

Ուսանողների թվի համեմատ լսարանների ընդհանուր մակերեսն իրոք բավարար է, սակայն քիչ են որակյալ ուսումնական գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ ժամանակակից սարքավորումները, դիդակտիկ և փորձարարական նյութերը, տեխնիկական միջոցները՝ մասնավորապես բժշկական մասնագիտությունների գծով գործնական և լաբորատոր պարապմունքներ կազմակերպելու համար:

Համակարգչային համակազմը խիստ հնացած է: Գրադարանային ռեսուրսները, մասնավորապես կոնկրետ մասնագիտական ուղղվածությամբ գրքերը սակավ են, հնացած և ուսանողներին առցանց տարբերակով ոչ հասանելի:

7.2 *ՄՈՒՀ-ն իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:*

Համալսարանում ֆինանսական ռեսուրսների հատկացումն իրականացվում է ըստ նախապես հաստատված բյուջեի, որի եկամուտները գրեթե ամբողջությամբ ձևավորվում են ուսման վարձերի հաշվին: Պետությունից, դրամաշնորհային ծրագրերից կամ այլ աղբյուրներից ձևավորվող եկամտի աղբյուրներ դեռևս գոյություն չունեն:

Բուհի հավաստիացմամբ՝ ֆինանսական միջոցներն օգտագործվում են համալսարանի ռազմավարական և ընթացիկ խնդիրների լուծման և առաքելության իրականացման նպատակով, այդուհանդերձ հստակեցված չէ բյուջեի բաշխումն ըստ գործունեության առանձին ուղղությունների, չի սահմանված, թե դրա որ մասը պետք է հատկացվի՝ ա) հետազոտական աշխատանքների իրականացմանը, բ) դասավանդողների որակավորման բարձրացմանը, գ) առանձին աշխատակիցների նյութական խրախուսմանը:

Ներկայացված փաստաթղթերը և փորձագիտական այցի հանդիպումների ընթացքում կատարված հավաստիացումները չեն հիմնավորում ուսանողների թվի կրճատման և

զեղչային համակարգի կիրառման պայմաններում համալսարանի կողմից իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար ամիրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ծավալների ապահովման փաստը:

7.3 *ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:*

Բուհի ՄԿԾ-երի ֆինանսական ապահովումը գրեթե ամբողջությամբ կախված է ուսման վարձերից գոյացող ընթացիկ ֆինանսական հոսքերի ծավալներից: Համալսարանում մշակված չէ, հետևաբար չի գործում ՄԿԾ-երի նպատակների իրականացման և շարունակականության ապահովմանն ու երաշխավորմանն ուղղված ֆինանսական միջոցների պլանավորման, ապահովման և բաշխման քիչ թե շատ երկարաժամկետ քաղաքականություն:

7.4 *ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:*

Ռեսուրսների ձեռքբերումը համալսարանում իրականացվում է ընթացիկ նվազագույն կարիքները բավարարելու նկատառումով, այլ ոչ թե ռազմավարական պլանի նպատակներից և առանձին ՄԿԾ-երի որակի ապահովման կարիքներից ելնելով: Բավականաչափ հստակեցված չեն ռեսուրսային բազայի բաշխման և համալրման ուղղությամբ ուսանողների և դասախոսների կարիքների բացահայտման, ինչպես նաև ռեսուրսների՝ ըստ ժամանակի բաշխման մեխանիզմները, գործընթացները և ընթացակարգերը:

7.5 *ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:*

Համալսարանում իրականացվում են փաստաթղթավորման գործընթացներ և առկա է փաստաթղթաշրջանառության ձևավորված համակարգ, որում ընդգրկված են համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները: Այդուհանդերձ, բավականաչափ հստակ չէ տեղեկատվության կառավարման քաղաքականությունը, բացակայում են կարգավորող ընթացակարգերը: Դեռևս լիարժեքորեն ներդրված չէ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը:

7.6 *ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:*

Բուհում գործում է մարզասրահ, մասնաշենքերից մեկում առկա է առաջին բուժօգնության կաբինետ (նախատեսվում է երկրորդ մասնաշենքում ևս ստեղծել): Բուհն ունի քաղաքացիական պաշտպանության համակարգ, հակահրդեհային վահանակներ և պահնորդային ծառայություն: Հատուկ կարիքներով անձանց համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ դեռևս ստեղծված չեն:

7.7 *ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:*

Բուհը որոշակի միջոցներ է ձեռնարկում առկա ռեսուրսների կիրառելիության ու հասանելիության նպատակով, նպատակ ունենալով ապահովել բոլորի համար դրանցից օգտվելու հավասար հնարավորություններ:

Ռեսուրսների կարիքն ու նպատակայնությունը պարզորոշելու համար դասավանդողների, շրջանավարտների և ուսումնառողների շրջանում անց են կացվում հարցումները սակայն դրանց միջոցով չի գնահատվում տրամադրված ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը:

Դատողություններ

Հաստատությունում կրթական ու տեխնիկական ռեսուրսների անբավարարությունը հնարավորություն չի ընձեռում իրականացնելու ժամանակակից տեխնոլոգիաներով ուսուցում՝ միտված որակի կառավարմանը և կայունության ապահովմանը:

Համալսարանում ֆինանսական ռեսուրսների պլանավորման և բաշխման ձևավորված պրակտիկան չի բխում մասնագիտությունների կրթական ծրագրերի խնդիրներից, չի կարող ապահովել դրանց շարունակականությունը և ընդհանուր առմամբ թույլ է միտված համալսարանի առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացմանը: Գնահատված չէ ֆինանսական ռեսուրսների պլանավորման, բաշխման, օգտագործման արդյունավետությունը, ինչը նվազեցնում է ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնության աստիճանը:

Համալսարանի ուսումնական կաբինետների՝ համապատասխան գրականությամբ, սարքավորումներով ու տեխնիկական այլ միջոցներով հագեցվածությունն անբավարար է, հատկապես մասնաճյուղում, իսկ համալսարանի համակարգչային ցանցի օգտագործման բնութագիրը հստակ չէ:

Վերոնշյալ հանգամանքները կարող են զգալիորեն սահմանափակել բուհում որակի շարունակական բարելավման հնարավորությունները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման և համապատասխան ուսումնական միջավայրի ստեղծման համար համալսարանն ունի և օգտագործում է որոշակի ռեսուրսներ, սակայն դրանցով ապահովվածությունը հեռու է բավարար լինելուց հետևյալ նկատառումներով.

- ֆինանսական և այլ ռեսուրսների հայթայթման և կառավարման համակարգի արդյունավետությունը չի գնահատված,
- ֆինանսական ռեսուրսների նպատակային հատկացման և բաշխման՝ համալսարանի առաքելությունից և ռազմավարական նպատակներից բխող քաղաքականության բացակայությունը հնարավորություն չի ընձեռում նաև գնահատել դրանց համապատասխանությունը մասնագիտական կրթական ծրագրերի պահանջներին,
- առկա ռեսուրսները կարիք ունեն արդիականացման և համալրման:

Եզրակացություն

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7 -ի պահանջներին գնահատվում է ***անբավարար***:

Խորհրդատվություն

Անհրաժեշտ է՝

1) մշակել ֆինանսական ռեսուրսների նպատակային հատկացման և բաշխման քաղաքականություն, որը կբխի համալսարանի առաքելությունից և ռազմավարական նպատակներից,
2) ուսումնական սենյակները, լաբորատորիաները, հատկապես մասնաճյուղում, հագեցնել ուսումնական միջավայրի համար անհրաժեշտ տեխնիկական, հաշվողական, հեռահաղորդակցության արդիական միջոցներով,
3) ստեղծել փաստացի գործող ժամանակակից էլեկտրոնային գրադարան,
4) շահակիցներին տրամադրել բավարար կողմնորոշող տեղեկատվություն համալսարանում գործող ստորաբաժանումների առկայության և գտնվելու վայրի մասին,
5) արդիականացնել և ավելի դինամիկ դարձնել համալսարանի կայքը՝ այն հագեցնելով համալսարանական կյանքի գործառույթները համակողմանիորեն արտացոլող տեղեկատվական նյութերով,
6) մշակել համակարգված փաստաթղթավորման հստակ ընթացակարգ, ներդնել փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ՝ տեղեկատվության կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով,
7) հայթայթել միջոցներ և հատկացնել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների և աշխատակազմի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը,
8) բարձրացնել կրթության հարմարավետության և հակահրդեհային անվտանգության աստիճանը:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՁԱՓԱՆԻՇ. ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ***ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:***

Բուհի ինքնավերլուծության համաձայն հանրությունը պարբերաբար իրազեկվում է համալսարանի գործունեության մասին «Հայբուսակ» ամսաթերթի և «Յունիթայմ» ամսագրում առանձին հոդվածների հրատարակման միջոցով, ինչը և համարվում է բավարար ցուցիչ հաշվետվողականության համակարգը ներկայացնելու համար:

Իրականում արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրումը սահմանափակ է, քանի որ համալսարանում սահմանված չէ հաշվետվողականության հստակ ընթացակարգ: Համալսարանը չի հրապարակում գործունեության ամենամյա հաշվետվություններ. հաշվետվողականությունը հիմնականում նույնացվում է ՁԼՄ-ներում կամ համապատասխան կայքէջում համալսարանի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ:

Համալսարանի կողմից ներկայացված չէ տրամադրած կրթության և օգտագործած ռեսուրսների համար պետությանը և հասարակությանը հաշվետու լինելու մեխանիզմները արտացոլող որևէ հիմք:

8.2 ***ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:***

Համալսարանը թե՛ ինքնավերլուծության մեջ, թե՛ փորձագիտական այցի ընթացքում ներկայացրել է իր գործունեությունը հասարակությանը մատուցելու առկա միջոցները և այդ հարցում բարելավումների մտադրությունները, սակայն դեռևս չունի հասարակությանը

համալսարանի հաշվետվողականության ապահովման մեխանիզմների արդյունավետության բարձրացմանն ուղղված պաշտոնապես հաստատված քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ::

Չի մշակված հաշվետվողականության այնպիսի կարգ, որը հնարավորություն կտար ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն բուհի յուրաքանչյուր ստորաբաժանման, դրանցում իրականացվող գործունեության, ձեռքբերումների, իրագործվող և ապագա ծրագրերի վերաբերյալ:

8.3 ***ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:***

2000թ. բուհում գործում է հասարակության հետ կապերի և լրատվության բաժին, որը, բուհի ինքնագնահատման համաձայն, ակտիվորեն աշխատում է հասարակության լայն շերտերի հետ՝ վերջին 3 տարիների համար կազմելով և իրագործելով մի շարք աշխատանքային ծրագրեր: Կիրառվել են է հետադարձ կապի հետևյալ մեխանիզմները՝ հանդիպումներ, բանավոր և գրավոր հարցուպատասխաններ, բաց դռների օրեր՝ տեղեկատվության, խորհրդատվության, կայքի «Հետադարձ կապ» էջ:

Այս ամենով հանդերձ, համալսարանում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործուն մեխանիզմներ և ընթացակարգեր դեռևս մշակված չեն: Արդյունքում՝ ձևավորվել է արտաքին շահակիցների արձագանքի և հետադարձ կապի ապահովման ոչ արդյունավետ պրակտիկա:

8.4 ***ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:***

Հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման գործող մեխանիզմների վերաբերյալ համալսարանը հավաստիացնում է, թե բուհը որդեգրել է հանրությանը գիտելիքների փոխանցման հատուկ քաղաքականություն լրացուցիչ կրթական ծրագրերի, թրեյնինգ ծրագրերի միջոցով՝ վերջին 3 տարիների ընթացքում դասավանդելով 100-ից ավելի թրեյնինգ կուրսեր հետևյալ ուղղություններով՝ ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա, հոգեբանություն, խորհրդատվություն, տնտեսագիտություն, բիզնեսի կառավարում, հաշվապահական հաշվառում և աուդիտ, տուրիզմ, դիզայն, իրավագիտություն, մանկավարժություն և մեթոդիկա, առողջապահության կազմակերպում, առողջապահություն: Սակայն նշված քաղաքականության և գործող մեխանիզմների վերաբերյալ որևէ հիմք չի ներկայացնում:

Դատողություններ

Բուհում չի ձևավորված պետությանը և հասարակությանը հաշվետու լինելու անհրաժեշտության պատշաճ ընկալում: Ուստին, հասկանալի պատճառով, համալսարանում դեռևս չեն մշակվել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգեր, իսկ առկա մեխանիզմները զգալի բարելավման կարիք ունեն, մասնավորապես՝ ՄԿԾ-ների բովանդակության ու դրանց կատարողականի գծով: Պարզորոշված չէ, թե հաշվետվողականության արմատավորված գործընթացները ինչպես են նպաստելու համալսարանի գործունեության բարելավմանը և, մասնավորապես, որակի ապահովման մշակույթի ձևավորմանը :

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ տրամադրվող կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար համալսարանի կողմից պետությանը և հասարակությանը հաշվետու լինելու գործընթացների գնահատման համար ինչպես ինքնավերլուծության մեջ, այնպես էլ՝ փորձագիտական այցի ընթացքում անհրաժեշտ հիմքեր չեն ներկայացվել:

Եզրակացություն

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8 -ի պահանջներին գնահատվում է ***անբավարար***:

Խորհրդատվություն

Անհրաժեշտ է՝

1) մշակել պետության և հասարակության առջև իրական հաշվետվողականություն ապահովող քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ,
2) վերլուծել վերջին հինգ տարիների ընթացքում հասարակությանը տրամադրված տեղեկատվության արդյունավետությունը բուհում իրականացվող գիտակրթական գործունեության որակական բարելավման առումով,
3) ակտիվացնել և արդիականացնել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման գործիքները,
4) ձևավորել հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման հուսալի համակարգ՝ իրեն բնորոշ գործառույթներով:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ. Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 ***Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:***

Արտաքին կապերի և միջազգայնացման տիրույթում համալսարանի հավակնություններն արտացոլված են 2007-2009թթ. և 2010-2015 թթ. ռազմավարական ծրագրերում, որոնցում մատնանշվում են նաև տարբեր կազմակերպությունների հետ կնքված համաձայնագրերը, արտերկիր մեկնած ուսանողների թիվը, արտաքին կապերի բաժնի կողմից կազմակերպված միջոցառումները: Սակայն համալսարանում դեռևս բացակայում են արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման հաստատված և մշտապես կիրառվող ռազմավարությունը, քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները, տարեկան գործողությունների ծրագրերը և հաշվետվությունները:

9.2 ***ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:***

Ինքնավերլուծության մեջ պարզապես թվարկված է միջոցառումների շարք, որը կազմակերպել է բուհի արտաքին կապերի բաժինը: Նրա կողմից իրականացվող գործընթացները կանոնակարգված չեն:

Համալսարանը չի կարող տրամադրել երաշխիքներ ուսումնառողների և դասավանդողների միջազգային շարժունության պատշաճ մակարդակ ապահովելու համար: Ուսանողների շարժունությունը սահմանափակված է նաև ՄԿԾ-ների անբավարար միջազգային համադրելիությամբ, կրեդիտների կուտակման, փոխանցման և ուսանողների շարժունակության ընթացակարգերի բացակայությամբ:

9.3 ***ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:***

Չափորոշիչի շրջանակում հաստատությունը նվաճումներ է համարում արտերկրի ուսանողների թվաքանակի ավելացումը համալսարանում, դասախոսական կազմի վերապատրաստումները միջազգային ծրագրերով, արտերկրի դասախոսների մասնակցությունն ուսումնական գործընթացին, ուսանողների արտերկրում սովորելը՝ առանց գնահատելու նման գործունեության արդյունավետությունը: Համալսարանը որևէ կրթօջախի օրինակով չի կատարել արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

9.4 ***ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:***

Հաստատությունում վերջին 3 տարիների համար առկա է տեղեկատվություն օտար լեզուներին տիրապետող ուսանողների, դասավանդողների, վարչական աշխատողների թվի և տոկոսի, օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացների/ՄԿԾ-ների, օտար լեզուներով դասավանդվող դասընթացներում /ՄԿԾ-ներում/ ներգրավված ուսանողների թվի վերաբերյալ:

Համալսարանն ստեղծում է որոշակի հնարավորություններ ուսանողների օտար լեզվի իմացության պատշաճ մակարդակ ապահովելու համար: Բուհը նաև դասախոսների և վարչական կազմի համար կազմակերպում է օտար լեզվի դասընթացներ, որոնք սակայն չեն կրում համակարգված պլանային բնույթ և չունեն հստակ ժամանակացույց: Համալսարանն անբավարար չափով է համալրել իր գրադարանն արդիական օտարալեզու մասնագիտական գրականությամբ:

Դատողություններ

Համալսարանը կարևորում է արտաքին կապերի և միջազգայնացման կանոնակարգված գործընթացների արմատավորումը, սակայն նախատեսված քայլերը հիմնականում ունեն հայեցակարգային բնույթ և ամրագրված չեն կոնկրետ աշխատանքային ծրագրերով: Բուհն իր ռազմավարական ծրագրում չի առաջադրել հստակ գործնական խնդիրներ, որոնք կարտահայտեին համալսարանի հետաքրքրություններն ու հավակնություններն արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտում:

Ներկայումս համալսարանի համար հրամայական պահանջ է փորձի փոխանակման զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ապահովումը, ինչն, ըստ էության, դեռևս հեռու է ձևավորված լինելուց:

Համալսարանի ուսանողների շատ փոքր մասն է կրթական ծրագրեր անցնում օտար լեզվով: Փոքր է նաև օտար լեզուներով դասավանդվող ՄԿԾ-ների թիվը. դրանք միայն բժշկական և դեղագործական ծրագրեր են, որոնք միջազգային բենչմարքինգի կարիք ունեն, ինչը դեռևս չի իրականացվել :

Համալսարանում չի գնահատվում միջազգային ծրագրերով վերապատրաստումներին բուհի դասախոսների մասնակցության, կամ ուսումնական գործընթացին արտերկրից ժամանած դասախոսների մասնակցության արդյունավետությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանի՝ արտաքին կապերի միջոցով հաստատության միջազգայնացմանը նպաստող գործառույթները կայացած չեն:

Եզրակացություն

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9 -ի պահանջներին գնահատվում է ***անբավարար***:

Խորհրդատվություն

Անհրաժեշտ է՝

1) մշակել արտաքին կապերի և միջազգայնացման հստակ ռազմավարություն,
2) իրականացնել միջազգային բենչմարքինգ,
3) մեծացնել օտար լեզվի իմացությամբ անձանց և օտար լեզվով դասավանդվող ՄԿԾ-երի քանակը,
4) ապահովել տարբեր դրամաշնորհային և կրթաթոշակային ծրագրերի մասին դասախոսների և ուսանողների տեղեկացվածությունը և խրախուսել նրանց մասնակցությունը:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ***ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:***

Բուհում գործում է որակի ապահովման կենտրոն, որի գործունեությունը կազմակերպվում է ըստ հաստատված կարգի: Առկա են որակի ապահովման ուղղությամբ որոշակի քայլեր, մասնավորապես՝ կենտրոնն ուղղորդում է առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների մշակման և բուհի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման, շահակիցների կարիքների վերհանման աշխատանքները:

Համալսարանում դեռևս չկան մշակված և ընդունված որակի ապահովման քաղաքականություն, ընթացակարգեր, արդյունավետության գնահատման չափանիշներ ու մեխանիզմներ, որոնց բացակայության պարագայում հնարավոր չէ ձևավորել որակի ներքին ապահովման ամբողջական և արդյունավետ համակարգ: Բուհում որակի ապահովման գործընթացներն առայժմ ոչ համակարգված բնույթ ունեն, մշակված չէ համապատասխան ձեռնարկ-ուղեցույց:

10.2 ***Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:***

Համալսարանի որակի ապահովման կենտրոնին հատկացված է տարածք, այն ունի տնօրեն և մեկ աշխատակից, որոնք իրականացնում են որակի ապահովման կենտրոնի կարգով սահմանված գործառույթները և փորձելով հավաքագրել մարդկային, նյութական, տեղեկատվական և այլ ռեսուրսներ՝ պլանավորում են ստեղծել կրթության որակի ապահովման ուղեցույց և ձեռնարկ: Համալսարանում դեռևս չեն ձևավորվել որակի ապահովման համակարգին ռեսուրսների հատկացումը կարգավորող փաստաթղթեր և պլանավորման աշխատանքներ:

10.3 ***Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:***

Համալսարանի որակի ապահովման կենտրոնը 2010 թ. սկսած իրականացրել է ուսանողների, շրջանավարտների, գործատուների շրջանում հարցումներ, որոնք միտված են տրամադրվող ծառայություններից նրանց բավարարվածության աստիճանի բացահայտմանը: Որակի ապահովման ներքին համակարգի ձևավորման գործընթացներում, (օրինակ՝ ինքնավերլուծության պատրաստման գործընթացում) ապահովված չէ տարբեր շահակիցների լիարժեք և համամասնական ներգրավվածությունը: Համալսարանում դեռևս չկան որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների արդյունավետ ներգրավման ընթացակարգեր և համակարգված գործընթաց:

10.4 ***Որակի ներքին ապահովման պարբերաբար վերանայվում է:***

Համալսարանում որակի ներքին ապահովման համակարգը գտնվում է ձևավորման փուլում և համեմատաբար դանդաղ է կայանում:

10.5 ***Որակի ներքին ապահովման համակարգը ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:***

Համալսարանում որակի ապահովման ներքին համակարգը դեռևս հնարավորություն չունի լիարժեք, համակարգված և ամբողջական տեղեկատվություն տրամադրել կրթության որակի վերաբերյալ բավականաչափ հավաստի արտաքին գնահատում իրականացնելու համար:

10.6 ***Որակի ներքին ապահովման համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:***

Համալսարանում կրթության որակի ներքին ապահովման համակարգը դեռևս չի մշակել համապատասխան ընթացակարգեր բուհի գործունեության թափանցիկությունն ապահովելու և ներքին և արտաքին շահակիցներին բուհում ընթացող գործընթացների որակի մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ:

Դատողություններ

Բուհում որակի ներքին ապահովման ուղղությամբ որոշակի գործընթացներ իրականացվում են, սակայն որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը հստակ ձևակերպված և մշակված չեն:

Կենտրոնը գործում է համատեղ օգտագործվող տարածքում, առանց համապատասխան ցուցանակի, իսկ նրա գործառույթները մի շարք շահակիցների հայտնի չեն:

Թեև կենտրոնը որակի ապահովման ուղղությամբ շահակիցների կարիքների բացահայտման նպատակով որոշակի ինքնաբուխ քայլեր ձեռնարկում է՝ նրանց շրջանում հարցումներ անցկացնելով, սակայն այդ գործունեությունը համապատասխան մեթոդաբանական հիմքերի վրա դրված չէ, ստացված արդյունքները պատշաճ

վերլուծության չեն ենթարկվում և չեն ներառվում որակի բարելավման սկզբունքով կառավարման համակարգում:

Որակի ապահովման կենտրոնի գործունեությունն ընդգրկում է սահմանափակ տիրույթ և բավականաչափ թափանցիկ չէ, իսկ բուհում ընթացող գործընթացների որակի մասին շահակիցներին տեղեկատվություն տրամադրելու համար կոնկրետ մեխանիզմներ մշակված չեն: Կենտրոնի առաջիկա անելիքները պետք է ուղղվեն վերոգրյալ գործընթացների համակարգմանը, համապատասխան կանոնակարգող փաստաթղթերի ստեղծմանը և մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսների ապահովման նոր քաղաքականության մշակմանը:

Որակի ներքին ապահովման հարցերով զբաղվող անձնակազմը բավականաչափ չի խորացել համակարգի ձևավորման բոլոր խնդիրների ուսումնասիրության մեջ և կարիք ունի ավելի ակտիվորեն ներգրավվելու այդ ուղղությամբ կազմակերպվող միջոցառումներում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը նպաստող որակի ապահովման ներքին համակարգը, որպես այդպիսին, ձևավորված չէ, իրականացվող գործընթացները որակի ապահովման համատեքստում բավականաչափ արդյունավետ չեն, համալիր բնույթ չեն կրում և դեռևս էական դեր չեն խաղում որակի կառավարման գործող համակարգում:

Եզրակացություն

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10 -ի պահանջներին գնահատվում է ***անբավարար***:

Խորհրդատվություն

Անհրաժեշտ է՝

1) համալսարանի կառավարման տարբեր մակարդակներում մշակել որակի ներքին ապահովման շրջանակ (ռազմավարական և գործառնական նպատակներ և խնդիրներ, գործողությունների պլաններ, հաշվետվություններ և այլն),
2) որակի ներքին ապահովման համակարգում ներդնել կատարողականի ցուցիչներ,
3) մշակել գործողությունների պլան և ժամանակացույց՝ համակարգելու համար որակի ապահովման ձեռնարկի պատրաստման աշխատանքները,
4) վերապատրաստել համալսարանի անձնակազմին՝ ներառելով համալսարանի բոլոր ստորաբաժանումները, (այդ թվում՝ մասնաճյուղը)՝ օգտագործելով «ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի» կողմից մշակված և հրատարակված նյութերը,
5) մշակել որակի ապահովման համակարգում հարցումների անցկացման մեթոդաբանություն, վերլուծությունների արդյունքների ներդրման ընթացակարգեր,
6) մշակել մեխանիզմներ՝ որակի ապահովման շրջափուլում բոլոր շահակիցների համամասնական մասնակցության համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	բավարար
2. Կառավարում և վարչարարություն	բավարար
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	անբավարար
4. Ուսանողներ	բավարար
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	բավարար
6. Հետազոտություն և զարգացում	անբավարար
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	անբավարար
8.Հասարակական պատասխանատվություն	անբավարար
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	անբավարար
10. Որակի ներքին ապահովման համակարգ	անբավարար

10 հուլիսի 2014թ.

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Իրինա Վանյան (1956)՝ դիպլոմավորված մասնագետ է, ավարտել է Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետաշինարարական ֆակուլտետը (1978): 1987թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Գերխտացված ցածրահարկ բնակելի կառուցապատման տեխնիկատնտեսական հիմնավորում» թեմայով և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Զբաղվում է քաղաքային տնտեսության էկոնոմիկայի և կառավարման խնդիրներով: 1994թ. ստացել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

1984թ. առ այսօր աշխատում է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում: 1994-ից «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոնի դոցենտ է: 2013-2014 թթ. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների վերապատրաստման դասընթացներ է վարել Շիրակի և Արմավիրի մարզերի համայնքներում: Եղել է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող ՀՀ Երկրաշարժի գոտու վերականգնման «Բնակարանների գնման վկայագրեր» ծրագրի ղեկավար (2000-2004), Վրաստանում ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից ֆինանսավորվող «Փախստականների բնակարանային վկայագրեր» ծրագրի սոցիալական բաղադրիչի ղեկավար (2005-2007), Հայաստանում Քաղաքների կայուն զարգացման հիմնադրամի տնօրեն (2004-2008), "Habitat for Humanity Armenia" հիմնադրամի տնօրեն (2008-2010):

Հեղինակ է 31 գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների՝ տնտեսագիտության, կառավարման և քաղաքային տնտեսության ոլորտներում, որոնցից երկուսը մենագրություններ են:

Մասնակցել է քաղաքային տնտեսության խնդիրներին վերաբերող միջազգային գիտաժողովների (Habitat-II՝ Ստամբուլ 1996 թ., «Ռուսաստանի քաղաքները 21-րդ դարում»՝ Մոսկվա, 2005թ., «Սոցիալական բնակելի ֆոնդ»՝ Վիեննա, 2005թ.): Որպես վերապատրաստվող մասնակցել է ՌԱԱԿ վերապատրաստումների առաջին (2013թ. ապրիլ), երկրորդ (2013թ. հուլիս) և երրորդ (2013թ. նոյեմբեր) փուլերին, որպես փորձագետ ընդգրկվել է փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական խմբի գործունեության մեջ (2012թ. նոյեմբեր - 2013թ. հուլիս):

Անդրե Կովարտ (1949)՝ Բելգիայի Թագավորության Սան Լյուվենի համալսարանի պրոֆեսոր, ուսումնական պլանների և դասընթացների մշակման բաժնի ղեկավար: 1989-2008թթ. հանդիսացել է համալսարանի կրթության որակի համակարգող, ակադեմիական զարգացման բաժնի ղեկավար: 1978 - 1988թթ. գլխավորել է համալսարանի ճարտարագիտության ֆակուլտետը: Միաժամանակ, որպես հետազոտող պրոֆեսոր, իրականացրել է հետազոտություններ Գենտի համալսարանի միջուկային ֆիզիկայի ինստիտուտում:

1989թ.-ից ի վեր Անդրե Կովարտն ակտիվորեն ներգրավված է բազմաթիվ եվրոպական ծրագրերում որպես գործընկեր և համակարգող: Տարաբնույթ հավատարմագրման գործընթացներում հանդիսացել է արտաքին փորձագետ (Բոսնիա և Հերցեգովինա, Խորվաթիա, Բելգիա, Ուկրաինա, Գերմանիա և այլն): Անդրե Գովարդը հեղինակ է միջազգային պարբերականներում հրատարակված բազմաթիվ հրապարակումների, որոնք վերաբերում են ինչպես գիտության /միջուկային ֆիզիկա/ բնագավառին, այնպես էլ՝ Բոլոնիայի գործընթացի բովանդակությանը, իրականացման ընթացքին, խնդիրներին /համալսարանների փորձագիտական գնահատման և հավատարմագրման հիմնահարցեր/:

Կոնստանտին Ենկոյան (1982)՝ դիպլոմավորված մասնագետ է, ավարտել է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ընդհանուր բժշկության ֆակուլտետը՝ «բուժական գործ» մասնագիտությամբ (2005) և կլինիկական օրդինատուրան՝ «Կլինիկական կենսաքիմիա» մասնագիտությամբ (2007): 2006թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Սաղմնային պրոտեոգլիկանների նյարդապաշտպան հատկության ուսումնասիրումը» թեմայով և ստացել բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2010թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Նեյրոդեգեներացիայի նեյրոքիմիական և մորֆոֆունկցիոնալ մեխանիզմները և նեյրոնների կենսակայունության ուղիները» թեմայով և ստացել կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2002թ.-ից առ այսօր աշխատում է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում: Եղել է ԵՊԲՀ կենսաքիմիայի ամբիոնի լաբորանտ (2002-2005թթ.), ավագ լաբորանտ (2005թ.), ասիստենտ (2005-2009թթ.), դոցենտ (2009-2012թթ.), 2012թ. ընտրվել է ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում: ԵՊԲՀ-ում զբաղեցրել է արտասահմանցի (անգլիախոս) ուսանողների դեկանի տեղակալի (2005-2007թթ.), հետդիպլոմային ուսուցման (այնուհետև՝ շարունակական կրթության բաժնի) դեկանի տեղակալի (2007-2008թթ.) պաշտոնները: 2013թ.-ից առ այսօր ԵՊԲՀ «Բուժական գործ» մասնագիտության կրթության որակի ապահովման և գնահատման ընդհանուր բժշկության ֆակուլտետի հանձնաժողովի նախագահն է:

Հեղինակ է շուրջ 60 գիտական աշխատանքների, 4 ուսումնական ձեռնարկների (համահեղինակությամբ):

Մասնակցել է 50-ից ավելի կոնֆերանսների, վերապատրաստումների, քննարկումլսումների, որոնցից կեսից ավելին՝ արտերկրում: Ակտիվորեն ընդգրկվել է կրթության որակի գնահատման և մասնագետների վերապատրաստման գործընթացներում:

Նարինե Հեքեքյան (1958)՝ դիպլոմավորված մասնագետ է, ավարտել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը (1979) և Վ.Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը (1988): 1998 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Պատճենումը որպես հայերենի տեխնիկական տերմինաբանության համալրման միջոց (հայերենի և ռուսերենի նյութի վրա)» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Զբաղվում է բառագիտության, տերմինաբանության, իմաստաբանության, բառարանագրության, հայոց լեզվի, այդ թվում՝ օտարախոսներին հայերենի դասավանդման մեթոդիկայի և էլեկտրոնային ուսուցման խնդիրներով: 2002թ.-ին ստացել է դոցենտի գիտական կոչում լեզվաբանություն մասնագիտությամբ:

1979 թ.-ից առ այսօր աշխատում է Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում: Եղել է ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարի տեղակալ, հայոց լեզվի և գրականության ամբիոնի ավագ լաբորանտ՝ կաբինետի վարիչի պարտականություններով (1979-1986), հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս (1986-1991), ավագ դասախոս (1991-2000): 2000-ից առ այսօր հայագիտության ամբիոնի դոցենտ է:

Հեղինակել է շուրջ 20 հոդված, 5 ուսումնական և ուսումնաօժանդակ ձեռնարկ, հանրակրթական դպրոցի 4 դասագիրք և 4 աշխատանքային տետր, 3 մեթոդական ձեռնարկ,

2 բառարան (Եվրոպայի խորհրդին առնչվող տերմինների և արտահայտությունների անգլերեն-հայերեն բառարան, Հայերենում գործածվող տառային հապավումների բառարան):

Մասնակցել է Եվրախորհրդի Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողովի լեզվի քաղաքականության վարչության կազմակերպած կոնֆերանսներին (2007՝ Պրահա, 2008՝ Մոսկվա, 2009՝ Ստրասբուրգ), կրթության որակի ապահովման գծով վերապատրաստումների:

Պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության շնորհակալագրով (2010):

Արմինե Ցարալովա (1993)՝ մագիստրատուրայի ուսանող է, ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետը (2013) և ստացել բակալավրի կրթական որակավորում «Կառավարում» մասնագիտությամբ:

2012-ից առ այսօր աշխատում է Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայում՝ որպես Սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ: 2013-ից ՀՊՏՀ կառավարման ամբիոնի «Գործարար կառավարում» մագիստրոսական ծրագրի մագիստրանտ է:

Հեղինակել է 3 հոդված՝ նվիրված ժամանակակից ֆինանսատնտեսական ճգնաժամի, արժութային քաղաքականության, մակրոտնտեսական կարգավորման հիմնախնդիրներին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

«Հայբուսակ» համալսարան, 21.04.2014 թ.–23.04.2014 թ.
«Շիրակացի» մասնաճյուղ, 25. 04.2014 թ. - 26.04.2014 թ.

	21.04.2014 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փորձագիտական խմբի հանդիպում, քննարկումներ	9:00	11:30	150 րոպե
2	Հանդիպում ռեկտորի հետ	12:00	12:30	30 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	12.30	13:30	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
5	Հանդիպում պրոռեկտորների և ուսումնական մասի պետի հետ	14:30	15:30	60 րոպե
6	Ռեսուրսների դիտարկում	15:30	16:30	60 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում. օրվա ամփոփում և հաջորդ օրվա պլանավորում	16:30	18:00	90 րոպե

	22.04.2014 թ	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում դեկանների հետ	9:00	10:00	60 րոպե
2	Հանդիպում ուսանողների հետ (12–15 հոգի)	10:00	11:30	90 րոպե
3	Հանդիպում դասախոսների հետ (10-12 հոգի)	11:30	12:30	60 րոպե
4	Հանդիպում շրջանավարտների հետ (10-12 հոգի)	12:30	13:30	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
6	Փորձագիտական խմբի բաց հանդիպում	14:30	15:30	60 րոպե
7	Ռեսուրսների դիտարկում և փաստաթղթերի ուսումնասիրություն	15:30	16:30	60 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում. օրվա ամփոփում և հաջորդ օրվա պլանավորում	16:30	18:00	90 րոպե

	23.04.2014թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փաստաթղթերի ուսումնասիրություն	9:00	10:00	60 րոպե
2	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ	10:00	11.00	60 րոպե
3	Հանդիպում ՈւՊ և ՈւԳԸ ներկայացուցիչների հետ	11.00	12:00	60 րոպե
4	Փորձագիտական խմբի բաց հանդիպում	12:00	12:30	30 րոպե
5	Հանդիպում գործատուների հետ (8-10 հոգի)	12:30	13:30	60 րոպե
6	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
7	Ռեսուրսների դիտարկում	14:30	15:30	60 րոպե
8	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	15:30	16:30	60 րոպե
9	Փորձագիտական խմբի փակ հանդիպում. օրվա ամփոփում և հաջորդ օրվա պլանավորում	16:30	18:00	90 րոպե

	25.04.2014 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Մեկնում Գյումրի և ժամանում մասնաճյուղ	9:00	11:00	120 րոպե
2	Հանդիպում մասնաճյուղի տնօրենի և տեղակալի հետ	11:00	11:30	30 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:30	12:30	60 րոպե
4	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ	12:30	13:30	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
6	Հանդիպում դասախոսների հետ	14:30	15:30	60 րոպե
7	Ռեսուրսների դիտարկում	15:30	16:30	60 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում. օրվա ամփոփում և հաջորդ օրվա պլանավորում	16:30	18:00	90 րոպե

	26.04.2014թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Փաստաթղթերի ուսումնասիրություն	9:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	10:30	11:30	60 րոպե
3	Հանդիպում շրջանավարտների հետ (10-12 հոգի)	11:30	12:30	60 րոպե
	Փորձագիտական խմբի բաց հանդիպում	12:30	13:00	30 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
6	Վերադարձ Երևան	14:00	15:30	90 րոպե
7	Հանդիպում ռեկտորի հետ	15:30	16:00	30 րոպե
8	Փորձագիտական խմբի ամփոփիչ քննարկում	16:00	18:00	120 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ
1	Երևանի «Հայբուսակ» համալսարանի կանոնադրություն	1
2	Երևանի «Հայբուսակ» համալսարանի ռազմավարական ծրագիր 2010-2015թթ.	1, 2
3	Երևանի «Հայբուսակ» համալսարանի ռազմավարական ծրագիր 2007-2010թթ.	1, 2
4	Երևանի «Հայբուսակ» համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգ	2, 3
5	Հավելված№ I.բ.1 Արտաքին շահակիցների բավարարվածության հարցումներ	2, 3
7	Հավելված№ I.բ.4 Ներքին շահակիցների բավարարվածության հարցումներ	2, 4, 5
8	Հավելված№ I.բ.2 Գիտական խորհրդի որոշումը մասնագիտական ուսումնական ծրագրերի փոփոխությունների վերաբերյալ	2, 3, 4
9	Հավելված№ I.գ.2 Գիտական խորհրդի որոշումները	2, 3, 4, 6, 10
10	Հավելված№ I.գ.3 ԲՈՒՀ-ի 2012թ. ուստարվա հաշվետվություն	2, 3, 4, 5, 6, 9, 10
11	Հավելված№II.դ.1 դիմորդների, ծնողների կարծիքներ	4. 7
11	Հավելված№ II.դ.2 լրացուցիչ կրթական ծրագրեր	3
14	Հավելված№ II.դ.3 դասախոսություններ, master class-եր, սեմինարներ	3, 5
15	Հավելված№ II.դ.4 գիտաժողովների նյութեր	5
16	Հավելված№ II.դ.5 գրանտային ծրագրերին դիմած փասթաղթերի ցանկ	5. 9
17	Հավելված№ II.զ.1 Հարցումներ արտաքին շահակիցների բավարարվածության վերաբերյալ	3, 8
18	Հավելված№ II.զ.2 Հարցումներ շրջանավարտների կրթությունից բավարարվածության վերաբերյալ	3, 8
19	Հավելված№ V.գ.1 Հարցումներ «դասախոսը ուսանողի աչքերով»	4, 5

20	Հավելված VIII.ա.6 ԲՈՒՀ-ի հասարակության հետ կապերի և լրատվության բաժնի տարեկան ծրագիր	8
21	Հավելված VIII.ա.7 ԲՈՒՀ-ի հարցաթերթիկներ «Բաց դռների օր»	4, 8
22	Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների	5
23	Գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի կարգ	3, 4
24	Ամբիոնների նիստերի արձանագրություններ	2, 3, 6
25	Խորհրդատվական պարապմունքների ժամանակացույց	3
26	Մագիստրոսական թեզերի թեմատիկա	3, 6
27	Ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգ	5
28	Միջազգային կապերի վարչության կանոնակարգ	9
29	ՄԿԾ-եր՝ բուժական գործ, դիզայն, մանկավարժություն և հոգեբանություն	3
30	Հեռակա ուսուցման կարգ	3, 4
32	ՈՒԳԸ կանոնակարգ	4, 6
33	Պրոֆեսորադասախոսական անձնակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգ	5
34	Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների	5
35	Ամբիոնների գործունեության կանոնակարգ	3
36	Ուսանողների հեռացման /ազատման/ և վերականգնման կարգ	4
37	Պրակտիկայի պայմանագրեր, ծրագրեր, օրագրեր և հաշվետվություններ	3
38	Ֆակուլտետների խորհուրդների կանոնակարգ	2
39	Երևանի «Հայբուսակ» համալսարանի «Շրջանավարտների միավորում» ՀԿ կանոնադրություն	7
40	Երևանի «Հայբուսակ» համալսարանի Ուսանողական պառլամենտի կանոնադրություն	4
41	2010-2013թթ. միջնաժամկետ ռազմավարական պլան	2, 10
42	Շրջանավարտնարի աշխատանքի տեղավորման և կարիերայի կենտրոնի կանոնադրություն	8
43	2012-2013 ուստարվա կարճաժամկետ պլան	2, 10
44	ԵՀՀ Որակի ապահովման կենտրոնի կատարած աշխատանքների նկարագրությունը	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Դիագնոստիկայի կենտրոն
2. Ախտորոշման կաբինետ
3. Վիրակապարան
4. Էլեկտրոֆիլիոլոգիական լաբորատորիա
5. Վիրաբուժական կաբինետ
6. Դեղագործական կաբինետ
7. Առաջին բուժօգնության կաբինետ
8. Օրթոպեդիկ ստոմոտոլոգիայի կաբինետ
9. Թերապևտիկ ստոմոտոլոգիայի կաբինետ
10. Մերսման կաբինետ
11. Ատամնատեխնիկական լաբորատորիա
12. Ուսումնական բազաներ (Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն, «Արմենիա» բժշկական կենտրոն)
13. Գծանկարի սենյակ
14. Կարի արտադրամաս
15. Դեկանատներ
16. Ամբիոններ
17. Լսարաններ
18. Գրադարան և ընթերցասրահ
19. Ճաշարան
20. Մարզադահլիճ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԲՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ